

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Արդշինբանկ» ՓԲԸ «24» փետրվարի 2003 թվականի բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 2 արձանագրությամբ

Փոփոխված է «Արդշինբանկ» ՓԲԸ «28» ապրիլի 2017 թվականի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 2017-2-4 Լ որոշմամբ,

Փոփոխված է «Արդշինբանկ» ՓԲԸ «26» հոկտեմբերի 2018 թվականի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 2018-2-2 Լ որոշմամբ

Ժողովի նախագահ՝



Կարեն Սաֆարյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ Կենտրոնական բանկում

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝

\_\_\_\_\_

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ**  
**ԲԱՆԿ»**

**փակ բաժնետիրական ընկերության**

**(նոր խմբագրություն)**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	3
Գլուխ 1. Հիմնական դրույթներ .....	3
Գլուխ 2. Բանկի պատասխանատվությունը և իրավունքները: Բանկի գույքը: .....	3
Գլուխ 3. Բանկի նպատակներն ու խնդիրները .....	4
Գլուխ 4. Բանկի գործունեությունը: Ֆինանսական գործառնությունները և այլ գործարքները .....	5
Գլուխ 5. Բանկի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները .....	5
ԲԱԺԻՆ II. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԱՐ: ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏՈՄԱՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ:	
ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄ .....	6
Գլուխ 6. Բանկի կանոնադրական հիմնադրամը .....	6
Գլուխ 7. Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը .....	6
Գլուխ 8. Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցումը: Բաժնետոմսերի հետ գնումը .....	6
Գլուխ 9. Բանկի բաժնետոմսերը և այլ արժեթղթերը: Բանկի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը 7	
Գլուխ 9՝ Բանկի արտոնյալ բաժնետոմսերը, դրանց դիմաց վճարվող շահութաբաժինները և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի իրավունքները	
Գլուխ 10. Բանկի բաժնետերերը: Բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները .....	8
Գլուխ 11. Բաժնետոմսերի փոխանցման հետ կապված գործարքները .....	11
Գլուխ 12. Բանկի շահույթի բաշխումը: Շահութաբաժիններ .....	11
Գլուխ 13. Հաճախորդների շահերի ապահովում .....	12
ԲԱԺԻՆ III. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ: ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ: ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵԹԸ .....	13
Գլուխ 14. Բանկերի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքները .....	13
Գլուխ 15. Գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքները: Խոշոր գործարքների կնքումը .....	13
Գլուխ 16. Բանկի գործարքներում շահագրգռվածություն: Շահագրգռվածության առկայության դեպքում Բանկի գործարքների կնքման կարգը .....	13
Գլուխ 17. Բանկի այլ գործարքների կատարումը .....	14
Գլուխ 18. Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը .....	14
ԲԱԺԻՆ IV. ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ:	
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ .....	15
Գլուխ 19. Ֆինանսական և այլ հաշվետվություններ .....	15
Գլուխ 20. Տեղեկությունների հրապարակում .....	15
Գլուխ 21. Վերահսկողությունը .....	16
ԲԱԺԻՆ V. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ .....	16
Գլուխ 22. Բանկի կառավարման մարմինները .....	16
Գլուխ 23. Հսկողությունը Բանկում .....	17
Գլուխ 24. Բանկի ղեկավարները և նրանց պատասխանատվությունը .....	17
ԲԱԺԻՆ VI. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ .....	18
Գլուխ 25. Ընդհանուր ժողովի իրավասությունները .....	18
Գլուխ 26. Տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովը .....	19
Գլուխ 27. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունքը: Բաժնետերերի ցուցակը .....	20
Գլուխ 28. Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը: Օրակարգի հարցերի նյութերը .....	21
Գլուխ 29. Ընդհանուր ժողովի նախապատրաստումը .....	21
Գլուխ 30. Ընդհանուր ժողովի նիստը: Ընդհանուր ժողովի որոշումները: Ընդհանուր ժողովի նիստի արձանագրությունը 21	
ԲԱԺԻՆ VII. ԽՈՐՀՈՒՐԴԸ .....	22
Գլուխ 31. Խորհրդի իրավասությունները .....	22
Գլուխ 32. Խորհրդի կազմը և ձևավորման կարգը: Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցում .....	24
Գլուխ 33. Խորհրդի անդամները: Խորհրդի անդամության սահմանափակումները .....	25
Գլուխ 34. Խորհրդի նախագահը .....	25
Գլուխ 35. Խորհրդի նիստերը .....	26
Գլուխ 36. Խորհրդի որոշումները: Խորհրդի նիստերի արձանագրությունները .....	27
Գլուխ 37. Խորհրդին կից կոմիտեները (հանձնաժողովները) և այլ մարմինները .....	27
ԲԱԺԻՆ VIII. ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ: ԱՌԻԴԻՏԸ ԲԱՆԿՈՒՄ .....	27
Գլուխ 38. Բանկի գործադիր մարմինը: Գործադիր մարմնի ձևավորումը .....	27
Գլուխ 39. Վարչության իրավասությունները .....	28
Գլուխ 40. Վարչության նախագահի իրավասությունը .....	28
Գլուխ 41. Վարչության նիստերը: Վարչության որոշումները .....	29
Գլուխ 42. Բանկի գլխավոր հաշվապահը .....	29
Գլուխ 43. Բանկի Ներքին աուդիտը .....	30
Գլուխ 44. Բանկի արտաքին աուդիտը .....	30
ԲԱԺԻՆ IX. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ .....	31
Գլուխ 45. Բանկի վերակազմակերպումը .....	31
Գլուխ 46. Բանկի լուծարումը .....	31
ԲԱԺԻՆ X. ԵԶՐԱՓՎԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	32
Գլուխ 47. Կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը .....	32
Գլուխ 48. Կանոնադրությունը և ՀՀ օրենսդրությունը .....	33

# ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Գլուխ 1. Հիմնական դրույթներ

1.1. «Արդյունաբերաշինարարական բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (նախկինում՝ «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերություն), այսուհետ՝ Բանկ, ստեղծվել է հիմնադիր ժողովի՝ 2002 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ:

Բանկի բաժնետերերի 14.10.2016թ. կայացած արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 03/16-01 և «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ 14.10.2016թ. միակ բաժնետիրոջ թիվ 2 որոշումների համաձայն և օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է նշված բանկերի վերակազմակերպում՝ «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ն Բանկին միացնելու միջոցով, որի արդյունքում «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի գործունեությունը դադարել է, իսկ Բանկը պահպանել է իր գործունեությունը՝ նաև որպես «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի իրավահաջորդ:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ստեղծված առևտրային կազմակերպություն:

Բանկի կազմակերպական-իրավական ձևն է՝ փակ բաժնետիրական ընկերություն:

Բանկի հիմնադիր փաստաթուղթը հանդիսանում է սույն կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն), որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.2. Բանկը մտնում է Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի մեջ և իր գործունեության մեջ ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» (այսուհետ՝ Օրենք), «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներով, այլ օրենքներով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում և սահմաններում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով (այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն) և Կանոնադրությամբ:

1.3. Բանկի ֆիրմային անվանումն է՝

հայերեն լեզվով.

լրիվ՝ «Արդյունաբերաշինարարական բանկ» փակ բաժնետիրական ընկերություն  
կրճատ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ

ռուսերեն լեզվով.

լրիվ՝ Закрытое акционерное общество «Промышленно-строительный банк»  
կրճատ՝ ЗАО «Ардшинбанк»

անգլերեն լեզվով.

լրիվ՝ «Industrial Construction Bank» closed joint-stock company  
կրճատ՝ «Ardshinbank» CJSC

1.4. Բանկի գտնվելու վայրն է (փոստային հասցեն)՝ Հայաստանի Հանրապետություն, 0015, քաղաք Երևան, Գ.Լուսավորչի փ., շ. 13 և 13/1:

1.5. Բանկը ձեռք է բերել իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցման պահից և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բանկային և ֆինանսական գործունեության իրականացման իրավունքը ստացել է Կենտրոնական բանկի կողմից համապատասխան լիցենզիա ստանալու պահից:

1.6. Բանկն ունի իր ֆիրմային անվանումը և ապրանքանիշը պարունակող կլոր կնիք հայերեն և այլ լեզուներով, տարածքային ստորաբաժանումների համարակալված կնիքներ և անհատականացման այլ միջոցներ:

## Գլուխ 2. Բանկի պատասխանատվությունը և իրավունքները: Բանկի գույքը:

2.1. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

2.2. Բանկը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բանկի բաժնետերերը (այսուհետ՝ բաժնետերեր) պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի դիմաց վճարված գումարի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Բանկը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության, համայնքների և դրանց մարմինների պարտավորությունների համար: Հայաստանի Հանրապետությունը, համայնքները և դրանց մարմինները պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար:

Բանկը պատասխանատվություն չի կրում Կենտրոնական բանկի պարտավորությունների համար: Կենտրոնական բանկը պատասխանատվություն չի կրում Բանկի պարտավորությունների համար:

2.3. Բանկն իրավունք ունի՝

1) ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած եղանակով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել այդ գույքը և դրանից ստացված եկամուտը և այլ օգտակար արդյունքը,

2) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, ստանալ Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում բանկային և առևտրային վարկեր, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր:

3) օտարել, ֆինանսական վարձակալության (լիզինգ) հանձնել, փոխանակել, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու:

4) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարովի ծառայություններ մատուցել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին և քաղաքացիներին, օգտվել իրենց ծառայություններից և աշխատանքներից:

5) ներդրումներ կատարել Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում:

6) օրենսդրության պահանջներին համաձայն՝ ստեղծել և մասնակցել իրավաբանական անձանց միություններին:

7) օգտվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

2.4. Բանկը պարտավոր է՝

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ ՀՀ լիազորված պետական մարմիններին:

2) Բանկի աշխատակիցների հետ կնքել աշխատանքային պայմանագրեր:

3) պատասխանատվություն կրել և հատուցել երրորդ անձանց պատճառված վնասը՝ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, ինչպես նաև այլ անձանց իրավունքները խախտելու համար:

4) ապահովել Բանկի փաստաթղթերի (Կանոնադրություն, իրավունքներ հավաստող փաստաթղթեր, տարեկան և ընթացիկ հաշվետվություններ, հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, Բանկի կառավարման մարմինների նիստերի արձանագրություններ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր) պահպանությունը:

5) կրել ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

2.5. Բանկը հանդիսանում է սեփականատեր՝

- Բանկի ստեղծման ժամանակ հիմնադիրների կողմից, իսկ հետագայում՝ բաժնետերերի կողմից կանոնադրական հիմնադրամում ներդրված դրամական միջոցների:

- Բանկի գործունեության ընթացքում ստացված եկամուտի:

- ՀՀ օրենսդրությամբ չարգելված ձևերով ձեռք բերված գույքի:

Բանկի գույքը առանձնացված է բաժնետերերի գույքից և հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

Բանկը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կատարել գործարքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Բանկի սեփականություն կարող է հանդիսանալ ցանկացած գույք, բացառությամբ գույքի այն տեսակների, որոնք, ՀՀ օրենսդրության համաձայն, չեն կարող լինել Բանկի սեփականություն:

2.6. Բանկն ինքնուրույն է իրականացնում իր հիմնական և այլ միջոցների տիրապետումը, օգտագործումն և տնօրինումը, այդ թվում՝ դրանց վերագնահատումը:

2.7. Բանկը «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով երաշխավորում է իր հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանումը:

2.8. Բանկի հաճախորդների բանկային ավանդների, դրամական միջոցների և Բանկին հանձնված գույքի նկատմամբ արգելանք, առգրավում, բռնագրավում կամ բռնագանձում կարող են կիրառվել միայն իրավասու պետական մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդների այն վնասների համար, որոնք առաջացել են նշված գույքի կամ հաշիվների նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արգելանք, առգրավում, բռնագրավում կամ բռնագանձում կիրառելու հետևանքով:

### **Գլուխ 3. Բանկի նպատակներն ու խնդիրները**

3.1. Բանկի գործունեության հիմնական նպատակը սեփական և ներգրավված միջոցների օգտագործումից շահույթ ստանալն է՝ Բանկի զարգացման ապահովման և մի մասը բաժնետերերի միջև բաշխման նպատակով:

3.2. Շահույթ ստանալու նպատակ հետապնդելու հետ մեկտեղ Բանկն իր առջև դնում է հետևյալ նպատակները և խնդիրները՝

- ֆինանսական ռեսուրսների կուտակում և արդյունավետ օգտագործում՝ ի օգուտ Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության ընդլայնմանը և զարգացմանը:

- հաճախորդներին լիարժեք և համալիր բանկային ծառայությունների մատուցման միջոցով նպաստել շուկայական հարաբերությունների զարգացմանը:

- վարկավորման (ֆինանսավորման) միջոցով Հայաստանի տնտեսության ներուժի զարգացումը և գիտատեխնիկական զարգացման արդյունքների ներդրման նպաստումը տնտեսության տարբեր ոլորտներում:

- մշակույթի, կրթության, գիտական, առողջապահական և շրջակա միջավայրի պահպանման և այլ նման օբյեկտները (ծրագրերը) ֆինանսավորելու միջոցով այդ ոլորտների զարգացման նպաստումը:

- հայկական կապիտալի համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներին ինտեգրացման խթանումը:

- Հայաստանի մասնակցությամբ միջազգային ֆինանսական և առևտրա-տնտեսական հարաբերությունների ընդլայնումը:

- օտարերկրյա ներդրումների ներգրավումը Հայաստանի տնտեսության մեջ:

#### **Գլուխ 4. Բանկի գործունեությունը: Ֆինանսական գործառնությունները և այլ գործարքները**

4.1. Բանկը և (կամ) նրա մասնաճյուղերը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են՝

- 1) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.
- 2) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.
- 3) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).
- 4) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.
- 5) մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.
- 6) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, և կատարել նման այլ գործառնություններ.
- 7) իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն.
- 8) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).
- 9) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի, ստանդարտացված ճուլակտորներ և հուշադրամներ.
- 10) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.
- 11) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).
- 12) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.
- 13) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն.
- 14) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն.
- 15) իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ.
- 16) իրականացնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործառնություններ:

4.2. Կենտրոնական բանկի թույլտվությամբ, Բանկն իրավունք ունի իրականացնել Օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ Օրենքում նախատեսված գործառնությունների հետ:

4.3. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իր՝ Օրենքով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար:

4.4. Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե ՀՀ օրենքներով այլ բան սահմանված չէ:

4.5. Բանկն ինքնուրույն է որոշում իր կողմից մատուցվող ծառայությունների վարձատրության չափը և ներգրավված ավանդների, տրամադրվող վարկերի և թողարկվող արժեթղթերի տոկոսադրույքները:

4.6. Բանկի և հաճախորդների փոխհարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ և կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ու հաճախորդի միջև կնքված պայմանագրերով:

#### **Գլուխ 5. Բանկի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները**

5.1. Բանկը Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս կարող է հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ: Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ստեղծել հիմնարկներ:

5.2. Բանկի մասնաճյուղը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և Բանկի անունից բանկային գործունեություն և (կամ) Օրենքով նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում:

5.3. Բանկի ներկայացուցչությունը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը ներկայացնում է Բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ: Ներկայացուցչությունը իրավունք չունի իրականացնել բանկային գործունեություն և Օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ:

5.4. Բանկի հիմնարկ է համարվում կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Բանկի ստեղծած իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունը:

5.5. Բանկի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները գործում են Բանկի անունից: Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Բանկը:

5.6. Բանկի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները գործում են Բանկի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

5.7. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները համարվում են ստեղծված Կենտրոնական բանկում գրանցման, իսկ հիմնարկները՝ ստեղծման մասին որոշումն ընդունելու պահից:

5.8. Բանկի առանձնացված ստորաբաժանումների ստեղծումը, գրանցումը և գործունեության

դադարեցումը, այդ թվում՝ ժամանակավոր, իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ օտարերկրյա պետություններում՝ Կենտրոնական բանկի համաձայնությամբ և այն երկրի օրենսդրության համաձայն, որտեղ գտնվում է ստորաբաժանումը:

5.9. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների գույքը տրամադրվում է Բանկի կողմից և հաշվառվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Բանկի հաշվեկշռում: Բանկի հիմնարկները, իրենց գործունեության նպատակներին, Բանկի հանձնարարություններին և իրեն ամրացված գույքի նշանակությանը համապատասխան, տիրապետում, օգտագործում ու տնօրինում են այդ գույքը:

5.10. Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարները հանդիսանում են Բանկի ղեկավարներ և նշանակվում են Բանկի վարչության նախագահի (այսուհետ՝ Վարչության նախագահ) կողմից՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով ու գործում են Վարչության նախագահի կողմից տրված լիազորագրերի հիման վրա: Բանկի հիմնարկների ղեկավարները չեն հանդիսանում Բանկի ղեկավար, նշանակվում են Վարչության նախագահի կողմից՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և գործում հիմնարկի կանոնադրության հիման վրա:

## **ԲԱԺԻՆ II. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ: ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ: ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄ**

### **Գլուխ 6. Բանկի կանոնադրական հիմնադրամը**

6.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը արտացոլում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Բանկի գույքի նվազագույն չափը: Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 50,227,200,000 (հիսուն միլիարդ երկու հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 502,272 (հինգ հարյուր երկու հազար երկու հարյուր յոթանասուներկու) հատ սովորական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

6.2. Բանկը կարող է լրացուցիչ տեղաբաշխել 8,000,000 (ութ միլիոն) հատ սովորական բաժնետոմս (հայտարարված սովորական բաժնետոմսեր)՝ յուրաքանչյուրը 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

6.3. Բանկը կարող է լրացուցիչ տեղաբաշխել 2,800,000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) հատ արտոնյալ բաժնետոմս (հայտարարված արտոնյալ բաժնետոմսեր)՝ յուրաքանչյուրը 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի Բանկի կանոնադրական հիմնադրամի ընդհանուր ծավալի 25 (քսանհինգ) տոկոսը:

### **Գլուխ 7. Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը**

7.1. Բանկն իրավունք ունի ավելացնել իր կանոնադրական հիմնադրամը բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով:

7.2. Բանկը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

7.3. Բանկն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական հիմնադրամը՝ շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական հիմնադրամ:

7.4. Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Բանկը չի կարող ավելացնել կանոնադրական հիմնադրամն ավելի, քան ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

7.5. Բանկը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասների դիմաց:

### **Գլուխ 8. Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցումը: Բաժնետոմսերի հետ գնումը**

8.1. Բանկը չի կարող նվազեցնել կանոնադրական հիմնադրամը, բացառությամբ այն դեպքի, երբ Բանկը հետ է գնում տեղաբաշխված բաժնետոմսերը այն բաժնետերերից, որոնք, Կանոնադրության 10.13 կետի համաձայն, իրավունք ունեն Բանկից պահանջել իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում:

8.2. Բաժնետոմսերի հետգնման համար անհրաժեշտ է Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: Կենտրոնական բանկը կարող է մերժել այդ համաձայնություն տալը, եթե՝

1) բաժնետոմսերի հետգնման դեպքում Բանկն ի վիճակի չի լինի լրիվ բավարարել իր պարտատերերի պահանջները.

2) Բանկը կխախտի հիմնական տնտեսական նորմատիվները.

3) բաժնետոմսերի հետգնումը կհանգեցնի ՀՀ բանկային համակարգի ապակայունացմանը:

8.3. Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումն ընդունվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Ընդհանուր ժողով) կողմից: Բաժնետոմսերի իրացման դեպքում Բանկը պարտավոր է իրականացնել իրացումը հետ գնելուց հետո 2 (երկու) ամսվա ընթացքում: Կենտրոնական բանկը, հաշվի առնելով արժեթղթերի

շուկայում տիրող իրավիճակը, ինչպես նաև Բանկի ֆինանսական վիճակը, կարող է նշված բաժնետոմսերն առավել բարենպաստ պայմաններով օտարելու նպատակով սահմանված ժամկետը երկարացնել ևս 6 (վեց) ամիս ժամկետով:

**Գլուխ 9. Բանկի սովորական բաժնետոմսերը և այլ արժեթղթերը: Բանկի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը**

- 9.1. Բանկի սովորական աժնետոմսերը տեղաբաշխվում են ոչ փաստաթղթային ձևով:
- 9.2. Բանկի լրացուցիչ սովորական բաժնետոմսերը տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով՝ վճարումը ՀՀ արժույթով կատարելու պայմանով կամ նախկինում տեղաբաշխված՝ Բանկի սովորական բաժնետոմսերի փոխանակման իրավունք նախատեսող պարտատոմսերի և (կամ) այլ արժեթղթերի փոխանակման միջոցով:
- 9.3. Բանկի սովորական բաժնետոմսերը չեն կարող փոխարկվել Բանկի պարտատոմսերի և (կամ) այլ արժեթղթերի:
- 9.4. Բանկի բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել, ներառյալ՝ Բանկի նկատմամբ պահանջների հաշվանցով, չի թույլատրվում:
- 9.5. Բանկի լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի վճարումը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն որոշված կարգով և գնով, եթե այլ բան նախատեսված չէ Կանոնադրությամբ:
- 9.6. Բանկն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի համախմբել (կոնսոլիդացնել) կամ բաժանել տեղաբաշխված բաժնետոմսերը:
- 9.7. Բանկն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթեր:
- 9.8. Բանկը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը Բանկի բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ պայմաններով ձեռքբերման իրավունք: Ընդ որում, Բանկն իրավունք չունի թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե Բանկի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է բաժնետոմսերի այն քանակից, որն անհրաժեշտ է փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերը Բանկի բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:
- 9.9. Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է Խորհրդի որոշմամբ: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումն ու տեղաբաշխումն իրականացվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:
- 9.10. Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները: Եթե նախատեսվում է պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն՝ դրանց սեփականատերերի ցանկությամբ, ապա այդ պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն մարվող գումարի մեծությունը և այն ժամկետը, որից սկսած պարտատոմսերը կարող են ներկայացվել վաղաժամկետ մարման:
- 9.11. Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Բանկի թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական հիմնադրամը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Բանկին՝ պարտատոմսեր թողարկելու նպատակով:
- 9.12. Բանկը կարող է թողարկել ինչպես անվանական, այնպես էլ ըստ ներկայացնողի պարտատոմսեր:
- 9.13. Բանկի թողարկած անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը հանձնվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համապատասխան անձանց (մասնագիտացված կազմակերպությանը): Ռեեստրի վարումը և պահպանումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնելու պահից Բանկն ազատվում է այն վարելու և պահպանելու համար սահմանված պատասխանատվությունից:  
Բանկի բաժնետիրոջ (անվանատիրոջ) պահանջով Բանկի բաժնետերերի ռեեստր վարողը պարտավոր է հաստատել բաժնետիրոջ (անվանատիրոջ)՝ Բանկի բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը, այդ անձին ռեեստրից համապատասխան քաղվածք տրամադրելով: Քաղվածքի տրամադրման կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ:

**Գլուխ 9<sup>1</sup>. Բանկի արտոնյալ բաժնետոմսերը, դրանց դիմաց վճարվող շահութաբաժինները և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի իրավունքները**

- 9<sup>1</sup>.1. Բանկի արտոնյալ բաժնետոմսերը տեղաբաշխվում են ոչ փաստաթղթային ձևով:
- 9<sup>1</sup>.2. Բանկը թողարկում է A, B, C, D, E, F, G, H, I, J, K, L, M, N դասերի փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր և O դասի հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր:
- 9<sup>1</sup>.3. Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների չափը հաշվարկվում է հետևյալ կերպ.  
1) փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ 1 (մեկ) բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը հաշվարկում է հետևյալ բանաձևով (այսուհետև՝ Բանաձև).

$$D=(Q*R*Exr t/Exr t-1)x m/365,$$

որտեղ՝

D-ն տարեկան հասանելիք շահութաբաժնի գումարն է,  
m-ը փոփոխական շահութաբաժնով փոխարկելի տվյալ դասի արտոնյալ բաժնետոմսի՝ հաշվետու տարում շրջանառության մեջ գտնվելու օրերի քանակն է՝ տեղաբաշխման ժամանակ դրա դիմաց վճարման օրվանից սկսած,

Q-ն փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքն է,  
R-ը ճշգրտող գործակից է, որը հավասար է.

- 2) A դասի համար՝ 0,08,
- 3) B դասի համար՝ 0,075,
- 4) C դասի համար՝ 0,07,
- 5) D դասի համար՝ 0,065,
- 6) E դասի համար՝ 0,06,
- 7) F դասի համար՝ 0,055,
- 8) G դասի համար՝ 0,05,
- 9) H դասի համար՝ 0,045,
- 10) I դասի համար՝ 0,04,
- 11) J դասի համար՝ 0,035,
- 12) K դասի համար՝ 0,03,
- 13) L դասի համար՝ 0,025,
- 14) M դասի համար՝ 0,02,
- 15) N դասի համար՝ 0,015:

Exr t-ն շահութաբաժինների վճարման պահի դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված ԱՄՆ դոլլարի նկատմամբ ՀՀ դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքն է,

Exr t-1-ն փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց տեղաբաշխման ժամանակ դրանց դիմաց վճարման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված ԱՄՆ դոլլարի նկատմամբ ՀՀ դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքն է:

Մեկ դասի արտոնյալ բաժնետոմսերի՝ մյուս դասի փոխարկման դեպքում տարեկան շահութաբաժինների ամփոփիչ գումարը հաշվարկվում է արտոնյալ բաժնետոմսերի յուրաքանչյուր դասի շրջանառության մեջ գտնվելու ժամանակին համամասնորեն:

2) O դասի հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ 1 (մեկ) բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը հաշվարկվում է 1,5 (մեկ ամբողջ հինգ տասնորդական) տոկոս տոկոսադրույքով՝ այդ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ:

9<sup>1.4</sup>. Փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման օրվանից 5 (հինգ) տարի հետո Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նշված բաժնետոմսերը կարող են փոխարկվել են նույն անվանական արժեքով այլ դասի արտոնյալ բաժնետոմսերի:

9<sup>1.5</sup>. Շահութաբաժինների վճարումն ըստ արտոնյալ բաժնետոմսերի դասերի իրականացվում է հաջորդաբար՝ հետևյալ հերթականությամբ. O, N, M, L, K, J, I, H, G, F, E, D, C, B, A:

9<sup>1.6</sup>. Բանկի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են դրամով:

9<sup>1.7</sup>. Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի

- 1) ստանալ շահութաբաժին Կանոնադրությամբ սահմանված կարգով,
- 2) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

#### **Գլուխ 10. Բանկի բաժնետերերը: Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները**

10.1. Բանկի բաժնետեր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են լինել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ քաղաքացիներ և իրավաբանական անձինք: Որոշ կատեգորիաների անձանց կողմից Բանկի բաժնետոմսերի ձեռքբերման առանձնահատկությունները (սահմանափակումները) սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

10.2. Բանկի բաժնետերերի թիվը չի կարող գերազանցել ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանակը:

10.3. Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրավունք ունեն՝

- 1) անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով մասնակցել Ընդհանուր ժողովներին և քվեարկել՝ ժողովի լիազորություններին վերապահված բոլոր հարցերով.
- 2) քվեարկության ժամանակ օգտվել ձայնի իրավունքից՝ իր կողմից լրիվ վճարված բաժնետոմսերի քանակին համաձայն.
- 3) անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը.
- 4) ստանալ շահութաբաժիններ՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով.
- 5) Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը.
- 6) Բանկի կողմից տեղաբաշխվող լրացուցիչ բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք՝



իրենց ունեցած բաժնետոմսերի քանակին համապատասխան.

7) Բանկի բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք՝ իրենց ունեցած բաժնետոմսերի քանակին համապատասխան.

8) ստանալ տեղեկություններ Բանկի գործունեության վերաբերյալ, այդ թվում՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, Բանկի արտադրատնտեսական գործունեությանը և Կանոնադրության 20.10 կետում նշված տեղեկություններին, բացառությամբ բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակով փաստաթղթերի.

9) ստանալ Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները, ծանոթանալ հաշվիչ հանձնաժողովի արձանագրություններին.

10) դիմել դատարան՝ Ընդհանուր ժողովի կողմից՝ «Օրենսդրության պահանջների խախտմամբ ընդունված որոշումների բողոքարկման նպատակով

11) նվիրել կամ այլ ձևով այլ անձանց անհատույց փոխանցել իրենց սեփականություն հանդիսացող Բանկի բաժնետոմսերը.

12) վաճառել կամ այլ ձևով այլ անձանց հատուցմամբ փոխանցել իրենց սեփականություն հանդիսացող Բանկի բաժնետոմսերը, եթե Կանոնադրության 11.1-11.6 կետերով սահմանված կարգով մնացած բաժնետերերը չեն օգտվում բաժնետոմսերի ձեռքբերման իրենց նախապատվության իրավունքից.

13) պահանջել Բանկից հետ գնել իրենց բաժնետոմսերը՝ «Օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով.

14) ծանոթանալ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակին.

15) օգտվել «Օրենսդրությամբ, Կանոնադրությամբ և Ընդհանուր ժողովի՝ իր լիազորությունների սահմաններում ընդունված որոշումներով նախատեսված այլ իրավունքներից:

10.4. Բաժնետիրոջ պահանջով Բանկը պարտավոր է տրամադրել նրան տեղեկանք՝ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակում նրան ընդգրկման մասին:

10.5. Բանկի սովորական տեղաբաշխված բաժնետոմսերի 1 (մեկ) և ավելի տոկոս ունեցող բաժնետերը իրավունք ունի դիմել դատարան՝ պահանջելով Բանկի ղեկավարներից փոխհատուցել Բանկին պատճառված վնասը:

10.6. Բանկի սովորական տեղաբաշխված բաժնետոմսերի 2 (երկու) և ավելի տոկոս ունեցող բաժնետերը իրավունք ունի առաջարկել հարցեր տարեկան Ընդհանուր ժողովի օրակարգում և Խորհրդի անդամների թեկնածություններ:

10.7. Բանկի սովորական տեղաբաշխված բաժնետոմսերի 2 (երկու) և ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ պահանջով Բանկը պարտավոր է անհատույց տրամադրել իրեն հետևյալ տեղեկությունները, թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք՝

1) Խորհրդի նախագահի և անդամների, Վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի վերաբերյալ՝ Կանոնադրության 20.10 կետով սահմանված տեղեկությունները.

2) Խորհրդի նախագահի և անդամների, Վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ.

3) Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի մասին՝ նրանց անունը (անվանումը), նրանց պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Բանկի բաժնետոմսեր), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

4) Բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են Բանկի կողմից հետևյալ գործառնություններից որևէ մեկի իրականացման հետ՝

- ցպահանջ և ժամկետային ավանդների ընդունում.
- առևտրային և սպառողական վարկերի տրամադրում, այդ թվում՝ հիփոթեքային վարկերի տրամադրում, պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման իրականացում, ֆակտորինգ.
- բանկային երաշխիքների և ակրեդիտիվների (վարկային նամակների) տրամադրում.
- բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների գնում, վաճառք և կառավարում.
- արտարժույթի գնում և վաճառք (փոխանակում), այդ թվում՝ դրամի և արտարժույթի ֆյուչերսների, օպցիոնների և նման այլ գործարքների կնքում.
- ֆինանսական վարձակալության (լիզինգի) իրականացում:

5) Բանկի կողմից Բանկի հետ կապված անձանց նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին.

6) Բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող բաժնետերերի խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության, ինչպես նաև Բանկի՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող բաժնետերերի անունների (անվանումների) վերաբերյալ.

7) այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական կապիտալում Բանկի ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20 և ավելի տոկոս մասնակցություն կամ հնարավորություն՝ ներազդելու նրանց որոշումների վրա.

8) հետևյալ փաստաթղթերի պատճենները՝

- Բանկի հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Բանկի գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի.

- Ընդհանուր ժողովի և կառավարման այլ մարմինների հաստատած Բանկի ներքին ակտերի, Բանկի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների.

- Բանկի կողմից պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական ու վիճակագրական հաշվետվությունների.

- Ընդհանուր ժողովի, Խորհրդի և Վարչության նիստերի արձանագրությունների,

- Կենտրոնական բանկի կողմից իրականացված վերստուգումների եզրակացությունների,

- Կենտրոնական բանկի կողմից Բանկի և (կամ) Բանկի ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումների, Ներքին աուդիտի ղեկավարի կողմից Խորհրդին և Վարչությանը ներկայացված հաշվետվությունների:

Սույն կետի համաձայն՝ Բանկից ստացված տեղեկությունները բաժնետիրոջ կողմից չեն կարող փոխանցվել այլ անձանց, ինչպես նաև դրանք չեն կարող օգտագործվել Բանկի գործարար համբավը արատավորելու, Բանկի բաժնետերերի կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով: Հակառակ դեպքում, նրանք ենթակա են պատասխանատվության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.8. Բանկի քվեարկող տեղաբաշխված բաժնետոմսերի 5 (հինգ) և ավելի տոկոս ունեցող բաժնետերը իրավունք ունի պահանջել գումարել Խորհրդի նիստ՝ պահանջի մեջ նշված հարցերի քննարկման համար:

10.9. Բանկի քվեարկող տեղաբաշխված բաժնետոմսերի 5 (հինգ) և ավելի տոկոս ունեցող բաժնետերը իրավունք ունի պահանջելու անցկացնել Բանկի ֆինանսատնտեսական գործունեության անկախ ստուգում: Այդ դեպքում աուդիտի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

10.10. Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տաս) և ավելի տոկոս ունեցող բաժնետերն իրավունք ունի առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իր ներկայացուցչին:

10.11. Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տաս) և ավելի տոկոս ունեցող բաժնետերը իրավունք ունի պահանջելու գումարել Բանկի բաժնետերերի արտահերթ Ընդհանուր ժողով, իսկ Կանոնադրության 26.13 կետով սահմանված դեպքում՝ նաև ինքնուրույն գումարել արտահերթ Ընդհանուր ժողով:

10.12. Կանոնադրության 10.5-10.11 կետերում նշված իրավունքները կարող են իրագործվել ինչպես մեկ բաժնետիրոջ, այդպես էլ բաժնետերերի խմբի կողմից, եթե վերջիններս համատեղ տիրապետում են բաժնետոմսերի անհրաժեշտ քանակին:

10.13. Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն Բանկից պահանջելու բաժնետոմսերի հետզնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետզնում, եթե՝

1) որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել.

2) Կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

Բանկից իրենց մասնակցության հետզնման պահանջի իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմվում է Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա՝ այն Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ, որի օրակարգը պարունակում է հարցեր, որոնց ընդունումը հանգեցրել է բաժնետերերի իրավունքների սույն կետի առաջին ենթակետում նշված սահմանափակմանը:

Բանկի կողմից բաժնետոմսերի հետզնման արժեքը որոշվում է Կանոնադրության 18.3 – 18.6 կետերով սահմանված կարգով՝ առանց բաժնետոմսերի գնահատման և հետզնման պահանջի իրավունք տվող Բանկի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

10.14. Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը պարտավոր են՝

1) բաժնետոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանված կարգով նախատեսված ժամկետներում և ամբողջ ծավալով վճարել բաժնետոմսերի արժեքը.

2) չիրապարակել Բանկի գործունեությանը վերաբերող՝ բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները.

3) ներկայացնել Բանկին (Բանկի կառավարման մարմիններին), Կենտրոնական բանկին և այլ պետական մարմիններին լիարժեք և արժանահավատ տեղեկություններ, հաշվետվություններ և տեղեկատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծավալով և կարգով.

4) ժամանակին տեղեկացնել Բանկի բաժնետերերի ռեեստրը վարողին իրեն վերաբերող հետևյալ տվյալների և դրանց փոփոխության մասին՝

- անվանումը (անունը, ազգանունը).

- իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման տվյալներ, գտնվելու վայր, ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի տվյալներ և բնակության հասցեն.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ:

5) ենթարկվել ՀՀ օրենսդրության և Կանոնադրության պահանջներին:

Սույն կետի 4-րդ ենթակետում նշված տեղեկությունների և դրանց փոփոխությունների չներկայացման

դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում դրա հետևանքով բաժնետիրոջը հասցված վնասի համար:

### **Գլուխ 11. Բաժնետոմսերի փոխանցման հետ կապված գործարքները**

11.1. Բանկի բաժնետոմսերի փոխանցման հետ կապված գործարքները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ ինչպես բաժնետերերի, այդպես էլ բաժնետերերի և բաժնետեր չհանդիսացող անձանց միջև:

11.2. Բաժնետերերը, սույն գլխով հաստատված կարգով, իրավունք ունեն օտարել կամ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևով այլ անձանց փոխանցել իրենց սեփականություն հանդիսացող Բանկի բաժնետոմսերը:

11.3. Բանկի մյուս բաժնետերերն իրենց բաժնետոմսերին համամասնորեն ունեն վաճառվող բաժնետոմսերը գնելու (ծեռք բերելու) նախապատվության իրավունք այն գնով և պայմաններով, որոնք առաջարկվել են գնորդին՝ վաճառքի առաջարկման պահից 30 օրվա ընթացքում:

11.4. Բաժնետոմսերի վաճառքը և ծեռք բերելու նախապատվության իրավունքը իրականացվում են հետևյալ կարգով՝

1) վաճառող բաժնետերը գրավոր ծանուցում է Բանկին, ի դեմս Խորհրդի նախագահի, բաժնետոմսերը կամ դրանց մի մասը վաճառելու իր մտադրության մասին, պարտադիր նշելով գործարքի էական պայմանները (վաճառվող բաժնետոմսերի քանակը, գինը, վճարման եղանակը ու ժամկետները և այլն):

2) Բանկը պարտավոր է վաճառքի առաջարկությունը ստանալուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Բանկի բաժնետերերին՝ կցելով վաճառող բաժնետիրոջ գրության և կից ուղարկված բոլոր փաստաթղթերի պատճենները և նշելով բաժնետոմսերի ծեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման կարգը և ժամկետները, ինչպես նաև ծանուցմանը չարձագանքելու հետևանքները: Բաժնետոմսերը վաճառող բաժնետիրոջ պահանջով Բանկը պարտավոր է նրան տրամադրել մնացած բաժնետերերին ուղարկված ծանուցագրերի և ուղարկման փաստը հավաստող փաստաթղթերի պատճենները:

3) նախապատվության իրավունքից օգտվելու համար բաժնետերերը պետք է ծանուցման մեջ նշված ժամկետներում և կարգով կատարել ծանուցման մեջ նշված գործողությունները:

11.5. Եթե վաճառվող բաժնետոմսերի ծեռքբերման նախապատվության իրավունքի իրականացումը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կապված է Կենտրոնական բանկի կամ այլ իրավասու մարմնի համաձայնության ստացման հետ, ապա Կանոնադրության 11.3 կետում նշված ժամկետը կասեցվում է մինչև համապատասխան համաձայնությունը (համաձայնության մերժումը) ստանալը, սակայն ոչ ավելի, քան ՀՀ օրենսդրությամբ նման համաձայնությունը տալու համար նախատեսված ժամանակահատվածը: Կանոնադրության 11.3 կետում նշված ժամկետը վերսկսվում է համապատասխան համաձայնությունը (համաձայնության մերժումը) ստանալու պահից:

11.6. Եթե մեկ կամ մի քանի բաժնետերեր չեն օգտվում իրենց նախապատվության իրավունքից, ապա Ընդհանուր ժողովը իրավունք ունի ընդունել որոշում վաճառվող բաժնետոմսերի ծեռքբերման նախապատվության իրավունքը այլ կերպ վերաբաշխելու մասին: Այդ որոշումը պետք է ընդունվի նախապատվության իրավունք ունեցող բաժնետերերի կողմից՝ միաձայն, ընդ որում, հարցի քվեարկությանը չպետք է մասնակցի բաժնետոմսերը վաճառող բաժնետերը:

11.7. Այն դեպքում, եթե Բանկի բաժնետերերը Կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում չեն օգտվում իրենց նախապատվության իրավունքից, վաճառող բաժնետերը կարող է վաճառվել բաժնետոմսերը երրորդ անձին (անձանց):

11.8. Բանկի բաժնետոմսերը կարող են անցնել Բանկի՝ քաղաքացի հանդիսացող բաժնետերերի ժառանգներին ընդհանուր ժառանգության կարգով, իսկ իրավաբանական անձ հանդիսացող Բանկի բաժնետերերի իրավահաջորդներին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավահաջորդության կարգով՝ Ընդհանուր ժողովի որոշման համաձայն:

11.9. Բանկի բաժնետոմսերի գրավադրումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Գրավադրված բաժնետոմսերի իրացումը իրականացվում է բաժնետոմսերի վաճառքի համար Կանոնադրությամբ սահմանված կարգով:

### **Գլուխ 12. Բանկի շահույթի բաշխումը: Շահութաբաժիններ**

12.1. Բանկն ինքնուրույն է որոշում իր զուտ շահույթի բաշխման սկզբունքները: Բանկի հաշվեկշռային և զուտ շահույթը որոշվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բանկի զուտ շահույթը (կուտակված շահույթը) մնում է Բանկի տիրապետման ներքո և Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է ուղղվի պահուստներ և այլ հիմնադրամներ ձևավորելու համար կամ բաշխվի բաժնետերերի միջև շահութաբաժինների տեսքով, ինչպես նաև ՀՀ օրենսդրության, Ընդհանուր ժողովի որոշումների և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն օգտագործվի այլ նպատակների համար:

12.2. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ (գլխավոր պահուստ) փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի առնվազն 15 (տասնհինգ) տոկոսի չափով: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Բանկի կորուստները ծածկելու, ինչպես նաև Բանկի պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Բանկի շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

12.3. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից տարեկան մասհանումների միջոցով: Պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների չափը սահմանվում է տարեկան զուտ շահույթի առնվազն 5 (հինգ) տոկոսը:

12.4. Բանկն ձևավորում է հիմնական միջոցների, արտարժույթի վերագնահատման, ինվեստիցիոն

արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների ձևավորման և օգտագործման, վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների և այլ հիմնադրամներ, որոնց ձևավորման կարգը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան սահմանվում է Բանկի ներքին իրավական ակտերով:

12.5. Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, որոնք նպատակ ունեն նպաստել Բանկի տնտեսական զարգացմանը և Բանկի աշխատողների սոցիալտնտեսական պահանջմունքների բավարարմանը:

12.6. Պահուստային և այլ հիմնադրամների օգտագործման մասին որոշումը ընդունում է Խորհուրդը:

12.7. Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր մասնակիցներին եռամսյակային, կիսամսյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

12.8. Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ (եռամսյակային և կիսամսյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը:

Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 (հիսուն) տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

12.9. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 (երեսուն) օր հետո:

12.10. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

1) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

2) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 (տասը) օր առաջ:

12.11. Բանկի շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

12.12. Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում շահութաբաժիններ չվճարվելու դեպքում դրանք կուտակվում և վճարվում են հետագայում բաժնետիրոջ առաջին իսկ պահանջով:

12.13. Բանկի սովորական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են դրամով և/կամ Բանկի բաժնետոմսերով:

### **Գլուխ 13. Հաճախորդների շահերի ապահովում**

13.1. Բանկը ապահովում է Բանկում գտնվող հաճախորդների և թղթակիցների դրամական միջոցների և այլ արժեքների պահպանումը: Դրանց պահպանումը երաշխավորվում է Բանկի՝ շարժական և անշարժ ողջ գույքով, դրամական միջոցներով, ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծվող պահուստներով և Կենտրոնական բանկի սահմանված կարգով՝ Բանկի կողմից իրականացվող ֆինանսական կայունությունը և իրացվելիությունը ապահովվող միջոցառումներով:

13.2. Բանկն ապահովվում է իր պարտավորությունների ժամանակին և ամբողջ ծավալով կատարելու հնարավորությունը, Կենտրոնական բանկի սահմանված տնտեսական նորմատիվների սահմաններում ինքնուրույն կարգավորելով իր հաշվեկշռի կառուցվածքը:

13.3. Բանկը, որպես ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող համակարգի մասնակից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում է երաշխիքային վճարներ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին:

13.4. Բանկը պահպանում և երաշխավորում է հաճախորդների բանկային ավանդների, դրամական միջոցների, Բանկին հանձնված գույքի և գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը:

13.5. Բանկն իրավունք ունի ինքնուրույն որոշել իր գործունեությանը վերաբերվող այն տեղեկությունների ցանկը, որոնք պարունակում են առևտրային գաղտնիք: Բանկի առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների ցանկը հաստատում է Խորհուրդը:

**ԲԱԺԻՆ III. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ: ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ: ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**

**Գլուխ 14. Բանկերի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքները**

14.1. Անձը համարվում է Բանկի հետ կապված, եթե համապատասխանում է Օրենքով և Կենտրոնական բանկի կողմից սահմանված հատկանիշներին:

14.2. Բանկը սահմանում է Բանկի հետ կապված անձանց հետ գործարքները կնքելու ներքին ընթացակարգերը: Ընդ որում, Բանկի և Բանկի հետ կապված անձի միջև Կանոնադրության 4.1 կետով (բացառությամբ այդ կետի 4), 5), 10) և 12) ենթակետերի) սահմանված գործարքների կնքումը, Վարչության նախագահի ներկայացմամբ, հաստատվում է Խորհրդի կողմից: Բանկի հետ կապված անձանց հետ սույն կետի խախտմամբ կնքված գործարքներն առոչինչ են:

**Գլուխ 15. Գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքները: Խոշոր գործարքների կնքումը**

15.1. Խոշոր են համարվում՝

1) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Բանկի բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Բանկի կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի ձեռքբերման հնարավորության կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 (քսանհինգ) և ավելի տոկոսը:

2) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Բանկի հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որը կազմում է Բանկի կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 25 (քսանհինգ) և ավելի տոկոսը:

15.2. Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի և բաժնետոմսերի արժեքը որոշվում է ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրության 18.1 – 18.6 կետերով սահմանված կարգով:

15.3. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 (հիսուն) տոկոսից ավելին, ընդունվում է Ընդհանուր ժողովի կողմից: Խոշոր գործարք, որի առարկա է հանդիսանում գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից (քսանհինգից) 50 (հիսուն) տոկոսը, կնքելու մասին որոշման ընդունումը, Խորհրդի որոշմամբ կարող է փոխանցվել Ընդհանուր ժողովին:

15.4. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից (քսանհինգից) 50 (հիսուն) տոկոսը, պետք է ընդունվի Խորհրդի կողմից միաձայն:

15.5. Սույն գլխի 15.3 – 15.4 կետերի պահանջները չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջները Բանկի կողմից չպահպանելու մասին:

**Գլուխ 16. Բանկի գործարքներում շահագրգռվածություն: Շահագրգռվածության առկայության դեպքում Բանկի գործարքների կնքման կարգը**

16.1. Բանկի գործարքներում շահագրգռ անձինք են համարվում Խորհրդի անդամը, Վարչության նախագահը և անդամները կամ բանկի այն բաժնետերը, որն իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին տիրապետում է Բանկի քվեարկող բաժնետոմսերի 10 (տասը) և ավելի տոկոսին, եթե այդ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝

- 1) հանդիսանում են գործարքի կողմ կամ մասնակցում են գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.
- 2) տիրապետում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 (քսան) և ավելի տոկոսին.
- 3) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում:

16.2. Կանոնադրության 16.1 կետում նշված անձինք պարտավոր են տեղեկություններ տրամադրել Խորհրդին, Ներքին աուդիտին և արտաքին աուդիտն իրականացնող անձին՝

1) այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նրանք ինքնուրույն կամ նրանց հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ համատեղ տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 (քսան) և ավելի տոկոսին.

2) այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նրանք պաշտոններ են զբաղեցնում.

3) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգռ անձ:

16.3. Այն գործարքի, որում առկա է շահագրգռվածությունը, կնքելու մասին որոշումն ընդունում է Խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

16.4. Խորհուրդը շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու համար պետք է գա այն եզրակացության, որ՝

- գործարքը կնքելու հետևանքով Բանկի կողմից ստացված վճարը պակաս չէ գործարքի արդյունքում Բանկի կողմից գործարքի մյուս կողմին փոխանցվող գույքի, տրամադրված ծառայության կամ կատարված աշխատանքի՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրության 18-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքից, կամ

- գործարքը կնքելու հետևանքով Բանկի ձեռք բերած գույքի, ստացված ծառայության կամ բանկի համար կատարված աշխատանքի դիմաց վճարը չի գերազանցում նշված գույքի, ծառայության կամ աշխատանքի՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրության 18-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը:

16.5. Եթե Խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են հանդիսանում կամ գործարքը և (կամ) փոխկապակցված գործարքները կնքվում են Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Բանկի այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 (երկու) տոկոսից, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ծայների մեծամասնությամբ:

Գործարքը կարող է կնքվել առանց Ընդհանուր ժողովի որոշման, եթե՝

1) գործարքը Բանկին շահագրգիռ անձի կողմից տրամադրվող փոխառություն է.

2) գործարքը Բանկի և մյուս կողմի միջև արդյունք է բնականոն տնտեսական գործունեության, որը կնքվել է մինչև շահագրգռվածության առկայության փաստի ճանաչումը (որոշում չի պահանջվում՝ մինչև հաջորդ Ընդհանուր ժողովի գումարման օրը):

16.6. Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միևնույն ժամանակ հանդիսանում է Բանկի գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև Կանոնադրության՝ խոշոր գործարքներ կնքելուն վերաբերվող դրույթները:

16.7. Շահագրգիռ ճանաչված անձը Բանկի առջև պատասխանատվություն է կրում Բանկին պատճառած վնասների չափով: Եթե պատասխանատվության ենթակա են մի քանի անձ, ապա նրանք Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: Անձն ազատվում է սույն մասով սահմանված պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ գործարքի կնքմամբ Բանկը կկրի վնասներ:

16.8. Շահագրգռվածության առկայության դեպքում Բանկի գործարքների կնքման վերաբերյալ Կանոնադրության սույն գլխի պահանջները չեն կիրառվում, եթե՝

1) բոլոր բաժնետերերի կողմից իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը.

2) իրականացվում է բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի փոխարկումը:

16.9. Սույն գլխի պահանջները չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության:

## **Գլուխ 17. Բանկի այլ գործարքների կատարումը**

17.1. Գործարքների կնքման մասին որոշումները, որոնց ընդունելը Կանոնադրության 15-րդ և 16-րդ գլուխների համաձայն չի վերապահված Ընդհանուր ժողովին կամ Խորհրդին, ընդունվում են Վարչության կամ Վարչության նախագահի կողմից՝ Կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված իրենց լիազորությունների սահմաններում: Նման որոշումների ընդունման կարգը սահմանվում է Բանկի ներքին իրավական ակտերով:

## **Գլուխ 18. Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը**

18.1. Գույքի շուկայական արժեքը որոշվում է Խորհրդի որոշմամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:

18.2. Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգիռ անձ է հանդիսանում Խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է Խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում:

18.3. Խորհրդի որոշմամբ Բանկը կարող է գույքի շուկայական արժեքի որոշման համար օգտվել անկախ գնահատողի ծառայություններից:

18.4. Անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի որոշումը պարտադիր է Կանոնադրության 10.13 կետով նախատեսված՝ Բանկի բաժնետերերից նրանց պատկանող բաժնետոմսերի հետզնման դեպքերում:

18.5. Բանկի բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի որոշման դեպքում հաշվի են առնվում այդ բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև առաջարկի և պահանջարկի գներին վերաբերող և համապատասխան գանգվածային լրատվության միջոցներում պարբերաբար հրապարակվող տեղեկությունները:

18.6. Բանկի բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել Բանկի գուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը, ինչպես նաև այն գինը, որը Բանկի բոլոր տեղաբաշխված բաժնետոմսերի համար համաձայն է վճարել Բանկի գույքի մասին լրիվ տեղեկություններ ունեցող գնորդը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք Բանկի գույքի շուկայական արժեքը սահմանող մարմինը (անձը) կհամարի կարևոր:

Բանկի բաժնետոմսերի որոշվող շուկայական արժեքը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է՝ Բանկի գուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքի հիման վրա:

**ԲԱԺԻՆ IV. ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱՎՈՒՄԸ:  
ՎԵՐԱՀԱՍՎՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Գլուխ 19. Ֆինանսական և այլ հաշվետվություններ**

19.1. Բանկը կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում տարեկան, եռամսյակային ֆինանսական և այլ հաշվետվություններ: Կենտրոնական բանկը կարող է սահմանել հաշվետվությունների ներկայացման նաև այլ պարբերականություն:

19.2. Բանկը, Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում, պարտավոր է իր ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև մամուլում, ինչպես նաև հրապարակել դրանք առանձին գրքույկների կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (բանկի գլխամասային գրասենյակում, բանկի մասնաճյուղերում և ներկայացուցչություններում):

19.3. Բանկի գործառնական (ֆինանսական) տարին սկսվում է հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

**Գլուխ 20. Տեղեկությունների հրապարակում**

20.1. Բանկը, Կենտրոնական բանկի սահմանած ձևով, դեպքերում, կարգով և ժամկետներում, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝

1) Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ այդ իրավաբանական անձանց ղեկավարների և նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին.

2) Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ այդ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների և նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին.

3) Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հայտարարություններն այն մասին, որ նրանց մասնակցության միջոցով որևէ նոր անձ բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերել: Եթե այլ անձ Բանկում ձեռք է բերել անուղղակի նշանակալից մասնակցություն, ապա Բանկը պարտավոր է Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու նպատակով այդ անձի՝ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, Կենտրոնական բանկ ներկայացնել Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը, ինչպես նաև այն իրավաբանական անձանց վերաբերյալ փաստաթղթերը (այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական հաշվետվություններ, տեղեկություններ ղեկավարների մասին, տեղեկություններ նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին), որոնցում Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձը հանդիսանում է նշանակալից մասնակցություն ունեցող անձ:

Սույն կետով սահմանված հաշվետվությունները և տեղեկությունները Բանկ ներկայացնելու պարտականությունը կրում են Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք:

20.2. Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և այլ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

20.3. Բանկը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական, հարկային և վիճակագրական հաշվետվություններ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

20.4. Բանկը պարտավոր է ինտերնետում՝ Բանկի տնային էջում, մշտապես հրապարակել՝

1) բանկի ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը.

2) տարեկան Ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը.

3) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ առկայության դեպքում.

4) Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), ունեցած Բանկի բաժնետոմսերի քանակը, նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

5) Խորհրդի, Վարչության անդամների ցանկը և անձնական տվյալները՝ նրանց անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, Խորհրդի անդամների, Վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը:

20.5. Կանոնադրության 20.4 կետում նշված տեղեկություններից բացի, Կենտրոնական բանկը կարող է պահանջել Բանկից ինտերնետում՝ Բանկի տնային էջում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած հաճախականությամբ և կարգով հրապարակել նաև այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների: Սույն

բացառությունը չի տարածվում Բանկի և (կամ) Բանկի ղեկավարի կողմից թույլ տրված օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջների խախտումների և դրանց համար Կենտրոնական բանկի կողմից Բանկի և (կամ) Բանկի ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների մասին որոշումների հրապարակման վրա և չի համարվում բանկային գաղտնիքի հրապարակում:

20.6. Բանկը պարտավոր է հրապարակել Կանոնադրության 20.4 կետում նշված տեղեկությունների մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ դրանք տեղի ունենալու օրվան հաջորդող 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

20.7. Բանկը պարտավոր է հրապարակել մամուլում տարեկան Ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը:

20.8. Բանկը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով նրան՝

1) 5-օրյա ժամկետում ընձեռել կանոնադրության, կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն:

2) տրամադրել Բանկի պետական գրանցման վկայականի և Բանկի գործող կանոնադրության պատճենները:

3) Բանկի թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում տրամադրել տեղեկություններ՝ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված ծավալով և կարգով:

4) տրամադրել Կանոնադրության 20.4 կետում նշված տեղեկությունները կամ փաստաթղթերի պատճենները:

Սույն կետում նշված տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման և (կամ) փոստային առաքման համար կատարված փաստացի ծախսերից:

20.9. Բանկը պարտավոր է իր գլխամասային գրասենյակում, մասնաճյուղերում և ներկայացուցչություններում՝ տեսանելի վայրում, փակցնել հայտարարություն՝ Կանոնադրության 20.8 կետում նշված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի և ժամանակի մասին:

20.10. Խորհրդի նախագահը և անդամները, Վարչության նախագահը, գլխավոր հաշվապահը, ինչպես նաև այդ պաշտոնների թեկնածուները պարտավոր են Բանկին ներկայացնել հետևյալ տեղեկությունները՝

- նրանց ազգանունը, անունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը:
- մասնագիտությունը և կրթությունը:
- վերջին 10 (տասը) տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները:
- տվյալ պաշտոնում (ընտրվելու) նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը:
- տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը:
- ունեցած Բանկի բաժնետոմսերի քանակի մասին, եթե այդ անձիք հանդիսանում են Բանկի բաժնետեր:
- տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոն:

- այդ անձի փոխհարաբերությունների բնույթը Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ:

- Կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ տվյալներ:

Սույն կետում նշված անձինք պարտավոր են տեղեկացնել Բանկին սույն կետում նշված ցանկացած տեղեկությունների փոփոխության մասին:

## **Գլուխ 21. Վերահսկողությունը**

21.1. Բանկի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկն այդ վերահսկողությունն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 51 գլխով սահմանված կարգով:

21.2. Բանկը և Բանկի մասնաճյուղերը պարտավոր են ընդունել և աջակցել Կենտրոնական բանկի ծառայողներին: Վերահսկողություն և վերստուգումներ իրականացնելիս արգելվում է ծառայողների օրինական գործողություններին խոչընդոտելը կամ միջամտելը:

## **ԲԱԺԻՆ V. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

### **Գլուխ 22. Բանկի կառավարման մարմինները**

22.1. Բանկի կառավարման մարմիններն են՝

- Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովը:
- Բանկի Խորհուրդը:
- Բանկի կոլեգիալ գործադիր մարմինը՝ Վարչությունը:
- Բանկի միանձնյա գործադիր մարմինը՝ Վարչության նախագահը:

22.2. Ընդհանուր ժողովը բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Ընդհանուր ժողովի իրավասությունները սահմանվում են Կանոնադրությամբ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

22.3. Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Խորհուրդը՝ Կանոնադրությամբ Ընդհանուր ժողովի իրավասությանը չվերապահված հարցերի սահմաններում: ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշ հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման իրավասությունը փոխանցել Խորհրդին:

22.4. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Բանկի կոլեգիալ գործադիր մարմինը՝ Վարչությունը և միանձնյա գործադիր մարմինը՝ Վարչության նախագահը: Բանկի գործադիր



մարմինների իրավասությանն են պատկանում կառավարման բոլոր հարցերը, որոնք Կանոնադրության համաձայն չեն հանդիսանում Ընդհանուր ժողովի և Խորհրդի իրավասություն: Վարչության և Վարչության նախագահի իրավասությունները սահմանազատվում են համաձայն Կանոնադրության:

### **Գլուխ 23. Հսկողությունը Բանկում**

23.1. Ներքին հսկողությունը՝ դա Բանկի կողմից (Բանկի կառավարման մարմինների, ստորաբաժանումների և աշխատակիցների կողմից) իրականացվող համալիր գործողություններն են, որոնք ուղղված են հետևյալ նպատակներին՝

- բանկային գործառնությունների և այլ գործարքների իրականացման ընթացքում ֆինանսատնտեսական գործունեության, ակտիվների և պասիվների կառավարման (պահպանման) և ռիսկերի կառավարման պատշաճ արդյունավետության ապահովումը.

- ֆինանսական, հաշվապահական, վիճակագրական և այլ հաշվետվությունների արժանահավատության, լիարժեքության, օբյեկտիվության և ժամանակին կազմման և ներկայացման, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության ապահովումը.

- ՀՀ օրենսդրության, Կանոնադրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների կատարման ապահովումը.

- Բանկի և նրա աշխատակիցների հանցավոր գործունեություններում, այդ թվում նաև՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման մեջ ընդգրկման կանխարգելման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան տեղեկությունները Կենտրոնական բանկ և պետական լիազոր այլ մարմիններին ներկայացման ապահովումը:

23.2. Բանկի ներքին հսկողության համակարգը ներառում (բաղկացած) է՝

- Բանկի կառավարման մարմինները (Ընդհանուր ժողովը, Խորհուրդը, Վարչության նախագահին և Վարչությունը, այդ թվում նաև գլխավոր հաշվապահին և նրա տեղակալներին).

- Բանկի մասնաճյուղերի ղեկավարներին (նրանց տեղակալներին) և գլխավոր հաշվապահներին.

- Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և աշխատակիցներին.

- Բանկի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին և Բանկի այլ աշխատակիցներին.

- Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին:

### **Գլուխ 24. Բանկի ղեկավարները և նրանց պատասխանատվությունը**

24.1. Բանկի ղեկավարներ են համարվում Խորհրդի նախագահը և Խորհրդի անդամները, Վարչության նախագահը և նրա տեղակալները, Վարչության այլ անդամները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, Ներքին աուդիտի ղեկավարը, նրա անդամները, ինչպես նաև Բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների (ղեկարտամենտների, վարչություններին, բաժինների և այլն) ղեկավարները, ինչպես նաև Կենտրոնական բանկի Խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի Խորհրդի կարծիքով որևէ կերպ Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ Վարչության նախագահի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ Բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատակիցները:

24.2. Բանկի ղեկավար չեն կարող լինել՝

1) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք.

2) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք.

3) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք.

4) անձինք, որոնց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին.

5) անձինք, որոնք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը՝ որպես բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.

6) անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

24.3. Բանկերի ղեկավարների որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները սահմանում է Կենտրոնական բանկը:

24.4. Բանկի ղեկավարներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Բանկի շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և կատարեն Բանկի նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

24.5. Բանկի ղեկավարները Բանկի առջև պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված իրական վնասի համար՝ ՀՀ օրենսդրության և դրանց հետ կնքված աշխատանքային և քաղաքացիական պայմանագրերի համաձայն: Անձն ազատվում է Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են Բանկի շահերից: Բանկի ղեկավարների պատասխանատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակում հետևյալ հնարավոր դեպքերը՝

1) մել փոխառուի, խոշոր փոխառուների, Բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվների խախտումով տրամադրված վարկերի, փոխառությունների կամ կնքված այլ գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Վարչության նախագահը, իսկ եթե տվյալ գործարքի կնքման համար օրենքով կամ Կանոնադրությամբ պահանջվում է Խորհրդի որոշում, ապա Խորհրդի անդամները և Վարչության նախագահը:

2) Վարչության նախագահը և անդամները պարտավոր են հատուցել նաև Բանկի Խորհրդի կողմից ընդունված ներքին իրավական ակտերի խախտումներով կնքված գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասները:

3) Եթե Խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտել են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, և հետագայում Բանկը կրել է նույն խախտումներով պայմանավորված վնաս, ապա Խորհրդի անդամները համապարտ պատասխանատվություն են կրում այդ իրական վնասների հատուցման համար, բացառությամբ, եթե Խորհրդի անդամն իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել է այդ խախտումները կանխելու ուղղությամբ բավարար և խելամիտ գործողություններ:

4) Եթե Ներքին աուդիտի կողմից ստուգման արդյունքներով բացահայտված օրենքների, այլ իրավական ակտերի խախտումների վերաբերյալ տեղեկությունները Խորհրդին չեն ներկայացվել, և հետագայում Բանկը, այդ խախտումներով պայմանավորված, վնասներ է կրել, ապա Ներքին աուդիտի ղեկավարը պարտավոր է հատուցել այդ իրական վնասները:

5) Եթե Բանկի հետ կապված անձի հետ գործարքը կնքվել է Բանկի ներքին ընթացակարգերի խախտումով Խորհրդին ներկայացված դրական եզրակացության հիման վրա, ապա այդ գործարքի հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Վարչության նախագահը:

6) Բանկի արժեքների, այդ թվում՝ դրամապահոցներում, առկա դրամական միջոցների և այլ արժեքների համար պատասխանատու ղեկավարներն ու այլ աշխատակիցները, որոնք պատասխանատու են ճանաչվել Բանկի ներքին իրավական ակտերով և կնքել են լրիվ նյութական պատասխանատվության պայմանագրեր, համապարտ պատասխանատվություն են կրում Բանկի արժեքների, այդ թվում՝ դրամապահոցներում առկա դրամական միջոցների ու այլ արժեքների, Բանկի կողմից ընդունված ներքին իրավական ակտերի խախտումներով պահպանումն իրականացնելու համար և պարտավոր են համապարտության կարգով հատուցել դրանց հետևանքով Բանկին պատճառված իրական վնասները:

7) Բանկի կողմից կնքված առոչինչ գործարքի հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում առոչինչ գործարքը ստորագրած Բանկի ղեկավար անձը:

8) Եթե Բանկի գործունեության ընթացքում օրենսդրության խախտումների համար Բանկի կամ Վարչության նախագահի կամ գլխավոր հաշվապահի նկատմամբ պետական իրավասու մարմինների կողմից նշանակվում են տուգանքներ, որոնք արդյունք են Բանկի այլ ղեկավարների կողմից իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ապա դրանց հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար համապարտ պատասխանատվություն են կրում տվյալ Բանկի ղեկավար հանդիսացող անձինք:

24.6. Բանկին հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են Խորհրդի կամ Վարչության այն անդամները, որոնք Բանկի վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել: Անձն ազատվում է Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են Բանկի շահերից, մասնավորապես:

1) Եթե ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով՝ կայացվել են որոշումներ, նույնիսկ եթե դրանք Բանկին հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես բիզնես ռիսկ:

2) Եթե ղեկավարի կողմից սխալ կամ թերի որոշումների ընդունումը եղել է բարեխիղճ՝ առանց վնաս պատճառելուն հատկապես ուղղված միտման, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները:

24.7. Բանկի ղեկավարների պաշտոնից ազատվելը չի ազատում նրանց իրենց մեղքով Բանկին պատճառված վնասի համար պատասխանատվությունից:

24.8. Բանկը կամ Բանկի այն բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք համատեղ) տնօրինում է (են) Բանկի տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 1 (մեկ) և ավելի տոկոսը, իրավունք ունի (ունեն) Բանկի ղեկավարների դեմ հայցով դիմելու դատարան՝ Բանկին պատճառված վնասների փոխհատուցման պահանջով:

## **ԲԱԺԻՆ VI. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

### **Գլուխ 25. Ընդհանուր ժողովի իրավասությունները**

25.1. Բանկի Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

- 1) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը:
- 2) Բանկի վերակազմակերպումը:
- 3) Բանկի լուծարումը:
- 4) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը:
- 5) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ

նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

6) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

7) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը՝ տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով, լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների հաստատումը.

8) Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշման ընդունումը.

9) Բանկի Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

10) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

11) Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

12) Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.

13) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

14) Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցման և բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունների ու նյութերի տրամադրման ձևի, այդ թվում՝ նաև զանգվածային լրատվության այն միջոցի, որում պետք է հրապարակվի ծանուցումը, սահմանումը.

15) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը, մեկ տեսակի և/կամ դասի բաժնետոմսերը մեկ այլ տեսակի և/կամ դասի փոխարկումը.

16) Կանոնադրության 16.5 կետով նախատեսված՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կատարման մասին որոշումների ընդունումը.

17) Կանոնադրության 15.3 կետով նախատեսված՝ խոշոր գործարքների կատարման մասին որոշումների ընդունումը.

18) Կանոնադրությամբ սահմանված դեպքերում Բանկի բաժնետոմսերի ձեռք բերումը և հետգնումը.

19) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

20) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծման կամ դուստր և կախյալ ընկերություններին մասնակցության մասին որոշումների հաստատումը, եթե տվյալ ֆինանսական տարում կնքված նման գործարքի կամ գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 10 (տասը) տոկոսը.

21) Բանկի Խորհրդի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի հաստատումը.

22) զուտ շահույթից ձևավորված հիմնադրամների միջև միջոցների վերաբաշխումը.

23) «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված որոշումների ընդունումը.

24) ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Սույն կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմնին կամ ղեկավարին, բացառությամբ սույն կետի 20) ենթակետում նշված հարցի, որով որոշումների ընդունումն Ընդհանուր ժողովի որոշմամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված ներքին իրավական ակտով կարող է փոխանցվել Խորհրդին:

## **Գլուխ 26. Տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովը**

26.1. Բանկը ամեն տարի գումարում է բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողով: Տարեկան Ընդհանուր ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո 4 (չորս) ամսվա ընթացքում:

26.2. Տարեկան Ընդհանուր ժողովը գումարվում է միայն բաժնետերերի համատեղ ներկայությամբ: Տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

26.3. Կանոնադրության 25.1 կետի 5) և 10) ենթակետերով սահմանված որոշումները ընդունվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովներում, բացառությամբ՝

- Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին կամ Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում չի գումարվել տարեկան Ընդհանուր ժողովը և նախորդ Խորհրդի կազմի լիազորությունների ժամկետը լրացել է Կանոնադրության 32.2 կետի համաձայն.

- եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ Ընդհանուր ժողով կարող է հրավիրվել միայն Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման և չափի մասին հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող:

26.4. Կանոնադրության 25.1 կետի 2), 3) և 10) ենթակետերում նշված հարցերով որոշումները չեն կարող ընդունվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) կարգով: Տարեկան Ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով

26.5. Տարեկան Ընդհանուր ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ:

26.6. Արտահերթ Ընդհանուր ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Բանկի Վարչության կամ Վարչության նախագահի, Բանկի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու օրվա դրությամբ Բանկի առնվազն 10 (տասը) տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր

բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

26.7. Արտահերթ Ընդհանուր ժողովը գումարվում է բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով՝ հարցման միջոցով: Արտահերթ Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

Կանոնադրության 25.1 կետի 5) և 10) ենթակետերով սահմանված որոշումները արտահերթ Ընդհանուր ժողովը կարող է ընդունել Կանոնադրության 26.3 կետի դրույթների համաձայն:

26.8. Արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկել ժողովի օրակարգում և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը:

26.9. Խորհուրդն իրավունք չունի փոփոխություններ մտցնել արտահերթ Ընդհանուր ժողով գումարելու մասին պահանջում առաջարկվող օրակարգում, ինչպես նաև փոփոխել օրակարգի քննարկման ենթակա հարցերի առաջարկվող ձևակերպումները՝ առանց պահանջը ներկայացրած կողմի համաձայնության: Արտահերթ Ընդհանուր ժողով գումարելու մասին պահանջը ներկայացրած կողմի համաձայնությամբ Խորհուրդն իրավունք ունի լրացնել օրակարգը այլ հարցերով:

26.10. Արտահերթ Ընդհանուր ժողով գումարելու պահանջը պետք է ստորագրված լինի ժողովը գումարելու պահանջ ներկայացրած անձի (անձանց) կողմից:

26.11. Արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին Խորհրդի որոշումը պետք է ընդունվի պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 (տասը) օրվա ընթացքում: Արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման կամ դրա գումարումը մերժելու մասին Խորհրդի որոշումն ուղարկվում է պահանջը ներկայացրած անձանց որոշման ընդունման պահից՝ 3 (երեք) օրվա ընթացքում: Արտահերթ ժողովի գումարման մասին պահանջի առկայության դեպքում Խորհուրդը պետք է արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից՝ 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում:

26.12. Խորհուրդն արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին որոշում կարող է ընդունել միայն այն դեպքում, եթե՝

1) խախտվել է Կանոնադրությամբ սահմանված արտահերթ ժողովի գումարման պահանջը ներկայացնելու կարգը.

2) արտահերթ ժողովի գումարման պահանջը ներկայացվել է նման պահանջ ներկայացնելու իրավունք չունեցող անձը:

26.13. Եթե արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից 10 (տասը) օրվա ընթացքում Խորհուրդն արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք: Նշված դեպքերում արտահերթ ժողովը կարող է որոշում ընդունել փոխհատուցելու ժողովի գումարման հետ կապված ծախսերը՝ Բանկի միջոցների հաշվին:

## **Գլուխ 27. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունքը: Բաժնետերերի ցուցակը**

27.1. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

1) Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը, ինչպես նաև այդ բաժնետոմսերի անվանատերերը,

2) Բանկի բաժնետեր չհանդիսացող Խորհրդի անդամները, Վարչության նախագահը և Վարչության անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

3) Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները՝ որպես դիտորդ.

4) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).

5) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ.

6) Բանկի ղեկավարները և աշխատակիցները՝ որպես օրակարգի հարցերով զեկուցողներ.

7) Կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ նախատեսված այլ անձինք:

27.2. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

27.3. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան Ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումը, և ավելի ուշ, քան Ընդհանուր ժողովի գումարումից 45 (քառասունհինգ) օր առաջ:

27.4. Եթե Ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են Ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 (երեսունհինգ) օր շուտ:

27.5. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի Բանկի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և նրան պատկանող Բանկի բաժնետոմսերի մասին:

27.6. Բանկի բաժնետերը Ընդհանուր ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ

մասնակցել ժողովին:

Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է գրավոր ձևով կազմված լիազորագրի հիման վրա: Լիազորագիրը պետք է պարունակի տեղեկություններ բաժնետիրոջ և նրա ներկայացուցչի մասին (անունը կամ անվանումը, բնակության կամ գտնվելու վայրը, անձնագրային կամ պետական գրանցման տվյալները): Լիազորագրերը պետք է ձևակերպված լինեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել Ընդհանուր ժողովին միայն լիազորագրի առկայության դեպքում:

Նույն բաժնետիրոջ կողմից տրված 2 (երկու) և ավելի լիազորագրերի առկայության դեպքում ուժի մեջ է համարվում վերջին լիազորագիրը:

27.7. Բանկի բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանց ղեկավարները Ընդհանուր ժողովին ներկայանում են առանց լիազորագրի:

### **Գլուխ 28. Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը: Օրակարգի հարցերի նյութերը**

28.1. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք ժողովի գումարման մասին ծանուցվում են պատվիրված նամակներ ուղարկելու կամ անձամբ հանձնելու միջոցով՝ Ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ:

28.2. Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

- 1) Բանկի ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը.
- 2) Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- 3) Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- 4) Ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.
- 5) բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին.

6) Խորհրդի որոշմամբ՝ այլ տեղեկություններ:

28.3. Տարեկան Ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը ներառում են՝

- 1) Բանկի տարեկան հաշվետվությունը.
- 2) տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Բանկի աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը.
- 3) տեղեկություններ Խորհրդի առաջադրվող թեկնածուների մասին.
- 4) Ժողովի որոշումների նախագծերը.
- 5) Խորհրդի որոշմամբ՝ այլ տեղեկություններ:

28.4. Տեղեկությունները և նյութերը տրամադրվում (ուղարկվում) են բաժնետերերին թղթային կամ էլեկտրոնային ձևով՝ Ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 10 (տասը) օր առաջ:

28.5. Ընդհանուր ժողովի որոշմամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված ներքին իրավական ակտով կարող են սահմանվել ծանուցման և նյութերի ու տեղեկությունների տրամադրման այլ ձևը, կարգը և ժամկետները, ինչպես նաև բաժնետերերին՝ ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկություններին ներկայացվող լրացուցիչ պահանջները:

28.6. Ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ ուղարկվում են Կանոնադրության 28.3 կետով սահմանված տեղեկությունները և նյութերը:

28.7. Եթե Բանկի բաժնետերերի ռեսսորում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան:

### **Գլուխ 29. Ընդհանուր ժողովի նախապատրաստումը**

29.1. Ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը, իսկ Կանոնադրության 26.13 կետով նախատեսված դեպքերում՝ ժողովը գումարող անձը (անձինք), որոշում է (են)՝

- 1) Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը.
- 2) Ժողովի օրակարգը.
- 3) Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- 4) բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.
- 5) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով,
- 6) Ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը:

### **Գլուխ 30. Ընդհանուր ժողովի նիստը: Ընդհանուր ժողովի որոշումները: Ընդհանուր ժողովի նիստի արձանագրությունը**

30.1. Ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովին մասնակցում են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Քվորումի առկայությունը ստուգվում է մինչև ժողովի սկիզբը՝ մասնակիցների գրանցման ընթացքում: Եթե ժողովը տևում է 1 (մեկ) օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է ժողովի մասնակիցների գրանցում:

30.2. Հեռակա քվեարկությամբ ընդունված որոշումն ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են

բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի քվեարկող բաժնետոմսերի 50-ից (հիսունից) ավելի տոկոսին:

30.3. Ընդհանուր ժողովներում նախագահում է Խորհրդի նախագահը, եթե ժողովի կողմից նախագահ չի ընտրվել այլ անձը:

30.4. Քվեարկությունն Ընդհանուր ժողովներում իրականացվում է «Բանկի մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

30.5. Քվեարկությունն Ընդհանուր ժողովում կարող է իրականացվել քվեաթերթիկների միջոցով: Քվեաթերթիկները տրվում են ժողովին մասնակցելու համար գրանցված բաժնետիրոջը (նրա ներկայացուցիչին)՝ ժողովի քվորումի առկայության դեպքում: Ընդհանուր ժողովը հեռակա կարգով անցկացնելու դեպքում, քվեաթերթիկները տրամադրվում են Բանկում լրացված քվեաթերթիկների ընդունման վերջին օրվանից առնվազն 30 (երեսուն) օր առաջ: Հեռակա կարգով Ընդհանուր ժողովի գումարման դեպքում լրացված քվեաթերթիկների ստացման վերջին օր է համարվում Ընդհանուր ժողովի գումարման ամսաթվին նախորդող աշխատանքային օրը:

30.6. Կանոնադրության 25.1 կետի 2), 9), 19) և 20) ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն Ընդհանուր ժողովը ընդունում է միայն Խորհրդի ներկայացմամբ:

30.7. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենսդրությամբ կամ Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

30.8. Կանոնադրության 25.1 կետի 1), 2), 4), 6) և 17) ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

30.9. Կանոնադրության 25.1 կետի 3) և 8) ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

30.10. Քվեարկության արդյունքները և Ընդհանուր ժողովի ընդունված որոշումները հայտարարվում են տվյալ ժողովում, որում կայացել է քվեարկությունը, կամ ժողովի ավարտից հետո բաժնետերերը տեղեկացվում են քվեարկության արդյունքներին՝ հաշվետվության հրապարակման կամ այն բաժնետերերին ուղարկելու միջոցով:

Եթե քվեարկության արդյունքները և Ընդհանուր ժողովի ընդունված որոշումները հնարավոր չէ հայտարարել տվյալ ժողովում, ապա դրանք պետք է ներկայացվեն Բանկի Կանոնադրությամբ՝ բաժնետերերին տեղեկություններ և նյութեր տրամադրելու համար սահմանված կարգով՝ Ընդհանուր ժողովը անցկացնելու պահից 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում:

30.11. Քվեարկության արդյունքներով Ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի կամ հանձնաժողովի գործառույթները կատարող անձի կողմից կազմվում է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ, որն ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի անդամները կամ հանձնաժողովի գործառույթները կատարող անձը:

Արձանագրությունը կազմելուց և այն ստորագրելուց անմիջապես հետո քվեաթերթիկները զմուսում է հաշվիչ հանձնաժողովը կամ հանձնաժողովի գործառույթները կատարող անձը և հանձնում Բանկի Խորհրդի արխիվ՝ պահպանության համար:

Ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում՝ առնվազն 2 (երկու) օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

30.12. Ցանկացած Բանկի բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել ՀՀ օրենսդրության և Կանոնադրության պահանջների խախտմամբ Ընդհանուր ժողովի ընդունված որոշումը: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել ժողովի որոշումը, եթե այդ բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա և թույլ տված խախտումներն էական չեն:

30.13. Եթե Ընդհանուր ժողովի որոշումն ընդունվել է Բանկի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի կամ անվանատերերի միաձայնությամբ, ապա «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ կետով, 68-րդ հոդվածի 10-րդ կետով, 69-րդ հոդվածի 4-րդ կետով, 70-րդ հոդվածի 2-6-րդ կետերով, 71-րդ հոդվածով, 73-րդ հոդվածով, 74-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ-չորրորդ մասերով, 2-րդ կետով և 4-րդ կետի առաջին մասով, 75-րդ հոդվածով և 79-81-րդ հոդվածներով սահմանված պահանջները չպահպանելը չի կարող հիմք հանդիսանալ այդ հիմքերով որոշումներն անվավեր ճանաչելու համար:

## **ԲԱԺԻՆ VII. ԽՈՐՀՈՒՐԴԸ**

### **Գլուխ 31. Խորհրդի իրավասությունները**

31.1. Խորհրդի իրավասություններն են՝

1) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը:

2) տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարումը, դրանց օրակարգերի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը՝ ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ և Բանկի ներքին

իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

3) Վարչության նախագահի, նրա տեղակալների, գլխավոր հաշվապահի և Վարչության այլ անդամների նշանակումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

4) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և անդամների նշանակումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը, Ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը.

5) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

6) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

7) Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բաշխումը.

8) շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, ինչպես նաև Բանկի բաժնետոմսերով միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

9) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը.

10) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը.

11) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը Ընդհանուր ժողովի հաստատմանը.

12) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

13) անհրաժեշտության դեպքում՝ Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

14) Բանկի կողմից Օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող, ինչպես նաև Բանկի կառավարման և ներքին հսկողության մարմինների գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի ընդունումը.

15) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման (գործունեության դադարեցման) մասին որոշումների ընդունումը.

16) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարումը.

17) Ընդհանուր ժողովին Կանոնադրության 25.1 կետի 2), 9), 19) և 20) ենթակետերում թվարկված հարցերի ներկայացումը.

18) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

19) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

20) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

21) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծման կամ դուստր և կախյալ ընկերություններին մասնակցության մասին որոշումների հաստատումը, եթե տվյալ ֆինանսական տարում կնքված նման գործարքի կամ գործարքների ընդհանուր գինը (արժեքը) չի գերազանցում Բանկի ընդհանուր կապիտալի 10 (տաս) տոկոսը.

22) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը կամ դրանցում մասնակցությունը.

23) Խորհրդին կից ժամանակավոր և մշտական կոմիտեների (հանձնաժողովների) ստեղծումը և անդամների նշանակումը, դրանց ձևավորումը և գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի ընդունումը.

24) Կենտրոնական բանկի հետ բանկային օրենսդրության, տնտեսական նորմատիվների խախտումների վերացման վերաբերյալ պայմանագրերի (համաձայնագրերի) կնքումը.

25) Կենտրոնական բանկի կողմից Բանկին արված հանձնարարականների կատարման ուղղությամբ որոշումների ընդունումը.

26) Կանոնադրությամբ սահմանված կարգով և դեպքերում՝ գույքի, այդ թվում բաժնետոմսերի և այլ արժեթղթերի, շուկայական արժեքի որոշումը.

27) գործարքներով Բանկի օգտին սահմանած տոկոսների և (կամ) տուժանքի (տույժ և տուգանք) հաշվեգրումը կասեցնելու և դադարեցնելու, դրանք ներելու (զիջելու) մասին որոշումների ընդունման կարգի սահմանումը.

28) Կանոնադրության 14.2 կետով նախատեսված՝ Բանկի և նրա հետ կապված անձի միջև գործարքների կնքման հաստատումը՝ Վարչության նախագահի ներկայացմամբ.

29) Կանոնադրության 16.3 կետով նախատեսված՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կատարման մասին որոշումների ընդունումը.

30) Կանոնադրության 15.4 կետով նախատեսված՝ խոշոր գործարքների կատարման մասին որոշումների ընդունումը.

31) Բանկի առևտրային գաղտնիք կազմող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկի հաստատումը.

32) Խորհրդի նախագահի ընտրությունը.

33) ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ, Խորհրդի կանոնակարգով և այլ ներքին իրավական ակտերով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

31.2. Եթե Խորհրդին ներկայացվող հաշվետվություններում բացահայտվում են ՀՀ օրենսդրության և Բանկի

ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա Խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ՝ այդ խախտումների վերացման և հետագայում չկրկնման ուղղությամբ:

31.3. Առնվազն տարին մեկ անգամ Խորհուրդը պետք է քննարկի Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

31.4. Առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհուրդը պետք է քննարկի Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Վարչության նախագահի (Վարչության) և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

### **Գլուխ 32. Խորհրդի կազմը և ձևավորման կարգը: Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցում**

32.1. Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ: Խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 (հինգ) և առավելագույնը 15 (տասնհինգ) անդամից:

32.2. Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված չէ այլ ժամկետ, ապա Խորհրդի անդամները ընտրվում են մինչև հաջորդ տարեկան Ընդհանուր ժողովի բացումը: Եթե Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում տեղի չի ունեցել Բանկի տարեկան Ընդհանուր ժողովը, ապա Խորհրդի անդամների լիազորությունները կասեցվում են, բացառությամբ՝ Կանոնադրության 26.3 կետում նշված հարցերի քննարկման նպատակով արտահերթ Ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման հետ կապված լիազորությունների:

32.3. Բանկի այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տաս) և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում կամ դրանում նշանակվելու իրենց ներկայացուցչին: Սույն կետում նշված իրավունքի իրականացման կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերով:

32.4. Բանկի այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 (տաս) տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տաս) և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին Խորհրդի կազմում: Այդ ձևով ներկայացուցչի ընդգրկումը Խորհրդում հնարավոր է միայն Բանկի բաժնետերերի խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:

Նշված պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները՝

1) Բանկի միավորվող բաժնետերերի վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը.

2) միավորվող բաժնետերերի կողմից առաջարկվող Խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ Կանոնադրության 20.10 կետով սահմանված տեղեկությունները.

3) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն 1 (մեկ) տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.

4) միավորվող բաժնետերերի հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

Պայմանագրի պատճենները տրամադրվում են Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին Ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

32.5. Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տաս) տոկոսից պակասին տիրապետող այն բաժնետերերը, որոնք չեն կնքել Կանոնադրության 32.4 կետում նշված պայմանագիրը (այսուհետ՝ Մինորիտար բաժնետերեր) իրավունք ունեն Կանոնադրության 32.6 կետով սահմանված կարգով՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության իրենց շահերը ներկայացնող միասնական ներկայացուցչին ընդգրկելու Խորհրդի կազմում:

32.6. Մինորիտար բաժնետերերի ներկայացուցչի թեկնածուի առաջադրումը, ընտրությունը և Խորհրդում ընդգրկումն իրականացվում են հետևյալ կարգով՝

- մինորիտար բաժնետերերը առաջադրում են Խորհրդում միասնական ներկայացուցչի թեկնածուներին՝ ներկայացնելով Կանոնադրության 20.10 կետով սահմանված տեղեկությունները՝ ստորագրված թեկնածուի կողմից: Յուրաքանչյուր մինորիտար բաժնետեր իրավունք ունի առաջարկել միայն 1 (մեկ) թեկնածու: Առաջադրվող թեկնածուները պետք է համապատասխանեն Բանկի ղեկավարներին << օրենսդրությամբ և Կանոնադրությամբ ներկայացվող պահանջներին.

- ընտրություններն իրականացվում են Ընդհանուր ժողովի նիստին բաց քվեարկությամբ «Մեկ մինորիտար բաժնետեր՝ մեկ ձայն» սկզբունքով: Քվեարկությանը մասնակցում են միայն մինորիտար բաժնետերերը, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ.

- ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն.

- Եթե առաջարկվել է միայն 1 (մեկ) թեկնածու, ապա նա համարվում է ընտրված, եթե իր օգտին քվեարկել են մինորիտար բաժնետերերի կեսից ավելին.

- մինորիտար բաժնետերերի քվեարկության արդյունքների հիման վրա Ընդհանուր ժողովի քարտուղարը կազմում է արձանագրություն, որը ստորագրվում է Ընդհանուր ժողովի քարտուղարի և նրանց ցանկությամբ՝ մինորիտար բաժնետերերի կողմից:

Սույն կետով սահմանված կարգով անցկացված քվեարկությունների արդյունքներում ընտրված (նշանակված) Մինորիտար բաժնետերերի ներկայացուցիչը ընդգրկվում է Խորհրդի կազմում՝ առանց Ընդհանուր ժողովի



կողմից լրացուցիչ ընտրությունների:

Եթե Մինորիտար բաժնետերերը միայն մեկն է և ինքը սույն կետով սահմանված կարգով առաջադրել է Խորհրդի կազմում ներկայացուցչի թեկնածու, ապա այդ թեկնածուն ընդգրկվում է Խորհրդի կազմում առանց ընտրության:

Մինորիտար բաժնետերերի միասնական ներկայացուցչի ընտրությունը անց է կացվում Խորհրդի մնացած անդամների ընտրություններից առաջ, սակայն Կանոնադրության 32.4 կետում նշված՝ խումբ ստեղծելու մասին պայմանագրի ներկայացումից հետո:

32.7. Ընդհանուր ժողովին Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը: Յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ նրա կամ նրան առաջարկած անձի կողմից պետք է ներկայացվեն Կանոնադրության 20.10 կետով սահմանված տեղեկությունները:

32.8. Ընդհանուր ժողովը կարող է վաղաժամկետ դադարեցնել Խորհրդի անդամի լիազորությունները առանց փոխհատուցման՝

իր դիմումի համաձայն կամ եթե՝

1) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Խորհրդի անդամ (բանկի ղեկավար).

3) մեկ տարվա ընթացքում նա բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն  $\frac{1}{4}$ -ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն կետի իմաստով իրական ժամանակի ռեժիմով և հեռակա քվեարկությամբ մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն.

4) նա, << օրենսդրությամբ սահմանված կարգով, որակագրկվել է կամ գրկվել որոշակի պաշտոն վարելու իրավունքից.

5) Խորհրդի անդամի հետ կնքված պայմանագրով սահմանված այլ հիմքերով:

32.9. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն կետի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

### **Գլուխ 33. Խորհրդի անդամները: Խորհրդի անդամության սահմանափակումները**

33.1. Խորհրդի անդամ կարող է լինել << կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող գործունակ ֆիզիկական անձը, որը համապատասխանում է << օրենսդրությամբ և Կենտրոնական բանկի կողմից բանկերի ղեկավարներին ներկայացվող պահանջներին:

33.2. Յուրաքանչյուր բաժնետեր Խորհրդում կարող է զբաղեցնել միայն 1 (մեկ) տեղ:

33.3. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և Բանկի վարչության նախագահը կամ Վարչության անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

33.4. Խորհրդի նախագահը կամ Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել Բանկի Վարչության նախագահ, Վարչության անդամ կամ Բանկի այլ աշխատակից, ինչպես նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության Խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ, եթե Բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք:

33.5. Բանկը վարում է Խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է Բանկի բաժնետերերի ծանոթացման համար: Ռեեստրում նշվող տեղեկությունները սահմանվում են << օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով:

33.6. Խորհրդի անդամները պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ Բանկի: Խորհրդի անդամները չեն կարող օգտագործել ընձեռվող հնարավորությունները և ստացված տեղեկությունները ի հակառակ Բանկի գույքային և ոչ գույքային շահերին:

33.7. Խորհրդի նախագահի և անդամների վարձատրության և (կամ) փոխհատուցման կարգը և չափը սահմանվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ և (կամ) Ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված ներքին իրավական ակտով:

### **Գլուխ 34. Խորհրդի նախագահը**

34.1. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից Խորհրդի անդամների կազմից:

34.2. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

2) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը.

3) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.

4) նախագահում է Ընդհանուր ժողովում, եթե ժողովի կողմից այլ անձ չի ընտրվել նախագահ.

5) կազմակերպում է Խորհրդին կից կոմիտեների (հանձնաժողովների) աշխատանքը.

6) ստորագրում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի ընդունած որոշումները, դրանցով հաստատված փաստաթղթերը (կանոնադրություններ, կանոնակարգեր, կարգեր և այլն).

7) Խորհրդի անդամների, Վարչության նախագահի, նրա տեղակալների և Վարչության այլ անդամների,

ինչպես նաև Խորհրդի կողմից նշանակվող Բանկի այլ ղեկավարների հետ կնքում է Բանկի անունից աշխատանքային (քաղաքացիա-իրավական) պայմանագրերը:

8) Բանկի անունից կնքում է արտաքին աուդիտին իրականացնող անձի հետ աուդիտային ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը:

34.3. Խորհրդի նախագահը կարող է ունենալ տեղակալ, որն ընտրվում է Խորհրդի կողմից, Խորհրդի անդամների կազմից: Խորհրդի նախագահի տեղակալը իրականացնում է Խորհրդի նախագահի պարտականությունները վերջինիս բացակայության ընթացքում:

34.4. Խորհրդի նախագահի հետ աշխատանքային (քաղաքացիա-իրավական) պայմանագիրը Բանկի անունից կնքում է Խորհրդի նախագահի տեղակալը, իսկ եթե այդպիսին չկա՝ Խորհրդի որոշմամբ լիազորված Խորհրդի անդամը:

### **Գլուխ 35. Խորհրդի նիստերը**

35.1. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ հետևյալ անձանց գրավոր պահանջով՝

- Խորհրդի անդամի.
- Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի.
- Վարչության կամ Վարչության նախագահի.
- Կենտրոնական բանկի.
- Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 (հինգ) կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի):

35.2. Խորհրդի նիստերը կարող են գումարվել նիստի մասնակիցների համատեղ ներկայությամբ, այդ թվում նաև՝ իրական ժամանակի ռեժիմում, երբ նիստի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ կապի միջոցով, կամ հեռակա կարգով՝ հարցման միջոցով: Կանոնադրության 31.1 կետի 1), 3), 4), 7), 11), 16) և 32) ենթակետերով սահմանված հարցերով որոշումների ընդունումը, ինչպես նաև Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Խորհրդի նախագահի ընտրությունը չեն կարող կատարվել հեռակա նիստերի ժամանակ:

35.3. Խորհրդի նիստերը մասնակիցների համատեղ ներկայությամբ գումարվում և անցկացվում են հետևյալ կարգով՝

- Խորհրդի նախագահը ծանուցում է Խորհրդի անդամներին և Վարչության նախագահին, ինչպես նաև Խորհրդի նիստ գումարելու մասին պահանջը ներկայացրած կողմին, եթե այդպիսին կա՝ նշելով Խորհրդի նիստի գումարման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ժամը, վայրը և նիստի օրակարգը: Օրակարգի հարցերին վերաբերվող նյութերի և փաստաթղթերի տրամադրման կարգը և ժամկետները սահմանվում են Խորհրդի կանոնակարգով.
- նիստն սկսվելուց առաջ կատարվում է Խորհրդի նիստին ներկայացած մասնակիցների գրանցում, որի արդյունքներով որոշվում է նիստի քվորումի առկայությունը.
- Խորհրդի նախագահը նիստին ներկա Խորհրդի անդամներին, Վարչության նախագահին (այսուհետ՝ նիստի մասնակիցներ) և ներկա գտնվող այլ անձանց ծանոթացնում է նիստի օրակարգին ու դրանում ընդգրկված հարցերի վերաբերյալ քվեարկության կարգին.
- նիստի յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի կարծիք հայտնելու նիստի օրակարգում ընդգրկված ցանկացած հարցի շուրջ.
- յուրաքանչյուր հարցի քննարկման և քվեարկության արդյունքում Խորհուրդը ընդունում է տվյալ հարցի վերաբերյալ որոշում.
- օրակարգի սպառվելուց հետո, Խորհրդի նախագահը տեղեկացնում է Խորհրդի նիստի արձանագրությանը ծանոթանալու և ստորագրելու կարգին:

35.4. Իրական ժամանակի ռեժիմում Խորհրդի նիստն անցկացվում է հեռախոսի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով (այսուհետ՝ կապի միջոց), որոնց միջոցով նիստի բոլոր մասնակիցներն հնարավորություն ունեն հաղորդակցվելու միմյանց հետ: Իրական ժամանակի ռեժիմում անցկացվող Խորհրդի նիստի մասնակից են համարվում նիստի անցկացման վայրում գտնվող և ներկա չգտնվող՝ կապի միջոցով նիստի աշխատանքներին մասնակցողները: Իրական ժամանակի ռեժիմում Խորհրդի նիստի գումարման և անցկացման ընթացակարգը և տեխնիկական կանոնակարգը սահմանվում են Բանկի ներքին իրավական ակտերով: Նիստի մասնակիցների ելույթները և կարծիքները կարող են ամրագրվել ձայնագրության և (կամ) տեսագրության միջոցով:

35.5. Խորհրդի նիստերը հեռակա կարգով անց են կացվում հարցման միջոցով հետևյալ կարգով՝

- Խորհրդի նախագահը ուղարկում է Խորհրդի անդամներին և Վարչության նախագահին, ինչպես նաև Խորհրդի նիստ գումարելու մասին պահանջը ներկայացրած կողմին, եթե այդպիսին կա, Խորհրդի նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերին վերաբերվող նյութերն ու փաստաթղթերը և քվեաթերթիկները՝ նշելով լրացված քվեաթերթիկների վերադարձման համար սահմանված ժամկետը (ամսաթիվը, ամիսը, տարեթիվը) և վավերապայմանները: Սույն կետում նշված փաստաթղթերը և նյութերը ուղարկվում են էլեկտրոնային փոստի կամ ֆաքսիմիլային կապի միջոցով.
- Խորհրդի անդամները 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում լրացնում և ստորագրում են քվեաթերթիկները և էլեկտրոնային փոստի (փոփոխությունների կատարման հնարավորությունը բացառող ձևաչափով) կամ ֆաքսիմիլային կապի միջոցով վերադարձնում են Բանկ: Քվեաթերթիկը համարվում է վավեր, եթե այն լրացված է և վերադարձվել է քվեաթերթիկում նշված կարգով և ժամկետներում.
- ստացված լրացված քվեաթերթիկների հիման վրա կազմվում է հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի արձանագրությունը, որին կցվում են լրացված քվեաթերթիկները:

35.6. Խորհրդի նիստը իրավագոր է (քվորում ունի), եթե դրան ներկա են կամ, կապի միջոցների օգտագործմամբ, մասնակցում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելի կազմող Խորհրդի անդամները, իսկ հեռակա նիստի ժամանակ՝ ստացվել և վավեր են ճանաչվել Խորհրդի անդամների ընդհանուր քանակի կեսից ավելի անդամների քվեաթերթիկները:

### **Գլուխ 36. Խորհրդի որոշումները: Խորհրդի նիստերի արձանագրությունները**

36.1. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Կանոնադրությամբ կամ Խորհրդի կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

36.2. Կանոնադրության 15.4 կետով սահմանված խոշոր գործարքների մասին որոշումները Խորհրդի կողմից ընդունվում են միաձայն:

36.3. Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում:

36.4. Խորհրդի որոշումների ընդունման ժամանակ ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

36.5. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունները կազմելու, ստորագրելու, պահպանելու և արխիվացնելու կարգը սահմանվում է Բանկի ներքին իրավական ակտերով:

36.6. Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող Խորհրդի բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

36.7. Խորհրդի նիստերի որոշումները ստորագրում է Խորհրդի նախագահը, որն պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

### **Գլուխ 37. Խորհրդին կից կոմիտեները (հանձնաժողովները) և այլ մարմինները**

37.1. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել մշտական կամ ժամանակավոր կոմիտեներ (հանձնաժողովներ):

37.2. Կոմիտեները Խորհրդին առընթեր մշտական գործող խորհրդակցական կոլեգիալ մարմիններ են, որոնք իրենց վերապահված ոլորտի շրջանակներում կորդինացնում են Բանկի այդ ոլորտին վերաբերող հարցերը, համակարգում են այդ ոլորտին վերաբերող Բանկի ներքին իրավական ակտերի մշակման, ընդունման, ներդրման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև վերահսկում են նշված ակտերի պահպանման պահպանումը:

37.3. Խորհուրդը կարող է ունենալ իր աշխատակազմը՝ համապատասխան աշխատատեղերով: Խորհրդի աշխատակազմի աշխատանքի վարձատրությունը կատարվում է Բանկի միջոցների հաշվին:

## **ԲԱԺԻՆ VIII. ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ: ԱՌԻԴԻՏԸ ԲԱՆԿՈՒՄ**

### **Գլուխ 38. Բանկի գործադիր մարմինը: Գործադիր մարմնի ձևավորումը**

38.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Վարչության նախագահը և Վարչությունը: Վարչության նախագահը կարող է ունենալ տեղակալներ: Վարչության նախագահը, նրա տեղակալները և Վարչության այլ անդամները նշանակվում են Խորհրդի կողմից, ընդ որում, Վարչության նախագահի տեղակալները և գլխավոր հաշվապահը՝ նշանակվում են Խորհրդի կողմից՝ Վարչության նախագահի ներկայացմամբ:

38.2. Վարչության քանակական կազմը սահմանում է Խորհուրդը: Վարչության կազմում պարտադիր ընդգրկվում են Վարչության նախագահը, նրա տեղակալը (տեղակալները) և գլխավոր հաշվապահը:

38.3. Վարչությունը գործում է Կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք պետք է սահմանեն Վարչության նիստերի իրավիքներն ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման, այդ թվում նաև՝ իր լիազորությունների սահմաններում ներքին իրավական ակտերի հաստատման կարգը:

38.4. Վարչության նախագահի և Վարչության անդամների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրության, Կանոնադրության, Բանկի ներքին իրավական ակտերի և դրանց հետ կնքված պայմանագրերի համաձայն: Վարչության նախագահի և Վարչության անդամների հետ պայմանագրերը Բանկի անունից ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի որոշմամբ լիազորված այլ անձ:

38.5. Վարչության նախագահը, Վարչության նախագահի տեղակալները կամ Վարչության այլ անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամ:

38.6. Վարչության նախագահը, Վարչության նախագահի տեղակալները և Վարչության այլ անդամները, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, կարող են կատարել վճարովի այլ աշխատանք միայն Խորհրդի համաձայնությամբ:

38.7. Խորհուրդը կարող է որոշում ընդունել Վարչության ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

38.8. Խորհրդի կողմից Վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են՝

1) իր դիմումի համաձայն կամ եթե՝

2) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Բանկի ղեկավար.

4) նա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որակագրկվել է կամ զրկվել որոշակի պաշտոն վարելու իրավունքից.

5) Վարչության նախագահի հետ կնքված պայմանագրով սահմանված այլ հիմքերով:

38.9. Վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը 1 (մեկ) տարուց ավելի է, ապա 1 (մեկ) տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Վարչության նախագահի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու սույն կետի առաջին պարբերության համաձայն նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Վարչության նախագահի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

### **Գլուխ 39. Վարչության իրավասությունները**

#### **39.1. Վարչությունը՝**

1) Նախապես քննարկում է և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, հիմնարկների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը.

2) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ, տալիս է հանձնարարություններ և հսկում դրանց կատարումը.

4) լուծում է Բանկի ներքին աշխատանքային կանոնակարգերով իրեն վերապահված հարցերը.

5) սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, վարկերի, ավանդների և այլ տոկոսադրույքները, բացառությամբ անհատական սակագների և պայմանագրային բնույթ կրող տոկոսադրույքների.

6) նախապես քննարկում է Բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը.

7) իր իրավասության սահմաններում կազմավորում է մշտապես գործող աշխատանքային, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ.

8) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով քննարկում է վարկերի տրամադրման հարցերը.

9) քննարկում է մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահարմարության հարցերը.

10) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների գործունեության եռամսյակային, տարեկան ծախսերի նախահաշիվներն ու դրանց կատարողականները.

11) հաստատում է Բանկի ընթացիկ գործունեությունը կանոնակարգող կարգերի, կանոնակարգերի, հրահանգների, ընթացակարգերի, մեթոդական ցուցումների և այլ աշխատանքային փաստաթղթերը, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք, համաձայն Կանոնադրության, ենթակա են Խորհրդի հաստատմանը.

12) ապահովում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը.

13) լուծում է Օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոնադրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ հարցեր:

39.2. Վարչությունը Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի սահմանած կարգով:

### **Գլուխ 40. Վարչության նախագահի իրավասությունը**

#### **40.1. Վարչության նախագահը՝**

1) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կարգադրություններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

2) Բանկի աշխատակիցների, բացառությամբ Խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների, հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր կամ լիազորում է դրանց մի մասի կնքումը Բանկի այլ ղեկավարներին, ու ՀՀ աշխատանքային օրենսգրքի իմաստով հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ.

3) լուծում է Բանկի աշխատակիցների, բացառությամբ Խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների, հետ կնքված աշխատանքային պայմանագրերը կամ լիազորում է դրանց մի մասի լուծումը Բանկի այլ ղեկավարներին.

4) Խորհրդի նշանակմանն է ներկայացնում Վարչության նախագահի տեղակալների, գլխավոր հաշվապահի և Վարչության անդամների այլ թեկնածուներին.

5) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով այլ բանկերում բացում է դրամային և արտարժույթային թղթակցային և (կամ) այլ հաշիվներ.

6) ստորագրում և իրավասու մարմիններին է ներկայացնում Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային և այլ բնույթի հաշվետվություններ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթեր.

7) ստորագրում է Վարչության որոշումները.

8) կազմակերպում և հսկում է Վարչության որոշումների կատարումը.

9) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Կանոնադրության 14.2 կետով սահմանված՝ Բանկի և նրա հետ կապված անձանց միջև գործարքները.

10) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների վարձատրության պայմանները.

11) Բանկի աշխատակիցների, բացառությամբ Խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների, նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

12) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով նշանակում է Բանկի մասնաճյուղերի կառավարիչներին, ներկայացուցչությունների, հիմնարկների, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների և անմիջականորեն իր ենթակայության տակ աշխատող ղեկավարներին և վաղաժամկետ դադարեցնում է նրանց լիազորությունները.

13) իր իրավասության սահմաններում կազմավորում է ժամանակավորապես գործող հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ.

14) Բանկի համապատասխան ստորաբաժանման կամ կոլեգիալ մարմնի հիմնավոր առաջարկությամբ սահմանում է ծառայությունների անհատական սակագները և պայմանագրային բնույթ կրող տոկոսադրույքները.

15) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Խորհրդի հաստատած Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է Բանկի աշխատատեղերը.

16) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով տրամադրում է վարկեր.

17) Խորհրդի կողմից նշանակված ղեկավարներին ու այլ աշխատակիցներին ժամանակավորապես արգելում է կատարել իրենց աշխատանքային պարտականությունները՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Խորհրդին.

18) իրականացնում է Կանոնադրությամբ, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

40.2. Վարչության նախագահը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

40.3. Վարչության նախագահը հաշվետու է Ընդհանուր ժողովին և Խորհրդին:

40.4. Վարչության նախագահի և Վարչության իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ, եթե Բանկի վարչության նախագահի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին:

40.5. Վարչության նախագահի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

#### **Գլուխ 41. Վարչության նիստերը: Վարչության որոշումները**

41.1. Վարչության նիստերը կազմակերպում և վարում է Վարչության նախագահը:

41.2. Վարչության նիստերն արձանագրվում են: Վարչության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Խորհրդին, Ներքին աուդիտին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին, Կենտրոնական բանկի ստուգող խմբին՝ նրանց պահանջով: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունները կազմելու, ստորագրելու, պահպանելու և արխիվացնելու կարգը սահմանվում է Բանկի ներքին իրավական ակտերով:

41.3. Վարչության նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր Վարչության անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

41.4. Վարչության որոշումները ստորագրում է Վարչության նախագահը, որն պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

#### **Գլուխ 42. Բանկի գլխավոր հաշվապահը**

42.1. Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Խորհրդի կողմից՝ Վարչության նախագահի ներկայացմամբ:

42.2. Գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

42.3. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, Վարչության նախագահին և Վարչության անդամներին, Ներքին աուդիտին կամ այլ անձի:

42.4. Գլխավոր հաշվապահը պետք է համապատասխանի Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

42.5. Գլխավոր հաշվապահը Վարչության նախագահի (Վարչության) հաստատմանն է ներկայացնում իր տեղակալի և Բանկի մասնաճյուղերի գլխավոր հաշվապահների, նրանց տեղակալների թեկնածուներին:

42.6. Գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհրդին և Վարչության նախագահին ներկայացնում է ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով ու բովանդակությամբ:

42.7. Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի բաժնետերերին, պարտատերերին և մամուլին ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ ՀՀ օրենսդրությանը և Կանոնադրությանը համապատասխան:

42.8. Գլխավոր հաշվապահի տեղակալները պետք է համապատասխանեն Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին: Գլխավոր հաշվապահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է նրա տեղակալներից որևիցե մեկը:

42.9. Գլխավոր հաշվապահը միաժամանակ չի կարող լինել այլ բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամ:

### **Գլուխ 43. Բանկի Ներքին աուդիտը**

43.1. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը (այսուհետ՝ Ներքին աուդիտ) Բանկի կառուցվածքային ստորաբաժանումն է, որը ստեղծվում է ներքին հսկողության իրականացման և Բանկի կառավարման մարմինների կողմից՝ Բանկի գործունեության արդյունավետության ապահովմանը օժանդակելու համար:

43.2. Ներքին աուդիտը գործում է մշտապես՝ Կանոնադրության, Ներքին աուդիտի կանոնակարգի և դրա հիման վրա Խորհրդի ընդունած՝ Բանկի այլ իրավական ակտերի հիման վրա:

43.3. Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները նշանակվում և պաշտոնից ազատվում են Խորհրդի որոշմամբ:

43.4. Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև Վարչության նախագահի և Վարչության անդամների հետ փոխկապակցված անձինք: Ներքին աուդիտի ղեկավարը պետք է համապատասխանի Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին: Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները միաժամանակ չեն կարող լինել այլ բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

43.5. Ներքին աուդիտը հաշվետու է Խորհրդին:

43.6. Ներքին աուդիտի խնդիրները, ղեկավարի և անդամների իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքային ծրագրի հաստատման և հաշվետվությունների ներկայացման կարգը հաստատվում են Ներքին աուդիտի կանոնակարգով և դրա հիման վրա Խորհրդի ընդունած՝ Բանկի այլ իրավական ակտերով:

43.7. Ներքին աուդիտի ստուգումն իրականացվում է Ներքին աուդիտի կանոնակարգով սահմանված կարգով:

43.8. Խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝ Ներքին աուդիտը՝

1) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության, գործառնական և այլ ռիսկերի նկատմամբ:

2) հսկողություն է իրականացնում Վարչության նախագահի (Վարչության), Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին իրավական ակտերի՝ Վարչության նախագահին (Վարչությանը) տրված հանձնարարականների կատարման նկատմամբ:

3) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

4) իրականացնում է Ներքին աուդիտի կանոնակարգով նախատեսված այլ գործողություններ:

43.9. Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

43.10. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին և Վարչության նախագահին (Վարչությանը) է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

1) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին:

2) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Վարչության նախագահի (Վարչության) կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին՝ խախտումը հայտնաբերելուց առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

43.11. Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

43.12. Բանկի մասնաճյուղերում ներքին հսկողություն իրականացնելու նպատակով Ներքին աուդիտի ղեկավարի անմիջական ենթակայության տակ կարող են ստեղծվել Ներքին աուդիտի տարածքային ստորաբաժանումներ: Այն մասնաճյուղերում, որոնցում չի նախատեսվում համապատասխան ստորաբաժանման ստեղծումը, Ներքին աուդիտի գործառույթներն իրականացվում են Բանկի ներքին աուդիտի կողմից:

### **Գլուխ 44. Բանկի արտաքին աուդիտը**

44.1. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով յուրաքանչյուր տարի Բանկը պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներգրավի աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ (Բանկի և (կամ) Բանկի բաժնետերերի հետ ընդհանուր գույքային շահ չունեցող) աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ Արտաքին աուդիտ):

44.2. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ: Արտաքին աուդիտի ընտրությունը կատարվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Արտաքին

աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Խորհուրդը:

44.3. Բանկի արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև Խորհրդի կողմից:

44.4. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն Արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 (հինգ) տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ պահանջով: Այդ դեպքում Արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր է կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում է ստուգում պահանջող բաժնետերը, ընդ որում, նա կարող է Բանկից պահանջել իր կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն Ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է ճանաչվել Բանկի համար:

44.5. Բանկի աուդիտորական ստուգումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համաձայն՝ Արտաքին աուդիտի հետ կնքվող պայմանագրի հիման վրա: Արտաքին աուդիտի ներկայացվող եզրակացության մեջ պետք է պարունակի տեղեկություններ՝

- Բանկի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության մասին.
- Բանկի կողմից Կենտրոնական բանկի սահմանած նորմատիվների պահպանման մասին.
- Բանկի կառավարման կազմակերպման մասին.
- Բանկում ներքին հսկողության վիճակի մասին.

- ստուգման ընթացքում հայտնաբերված՝ հաշվապահական հաշվառումը և ֆինանսատնտեսական գործունեության իրականացումը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի խախտումների վերաբերյալ.

- ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ և Արտաքին աուդիտի հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ դրույթներ:

Արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Բանկի ղեկավարությանը) կազմում:

44.6. Բանկում աուդիտ իրականացնելու ընթացքում Արտաքին աուդիտի կողմից Բանկի ֆինանսական վիճակն իր կարծիքով էականորեն վատթարացման փաստեր, ինչպես նաև ներքին համակարգերի (այդ թվում՝ ներքին հսկողության համակարգի) թերություններ հայտնաբերելու դեպքում Արտաքին աուդիտը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել Կենտրոնական բանկին:

44.7. Կենտրոնական բանկը կարող է պարտադրել Բանկին 4 (չորս) ամսվա ընթացքում հրավիրել Արտաքին աուդիտ և հրապարակել նրա եզրակացությունը:

44.8. Կենտրոնական բանկն իրավունք ունի պահանջելու Բանկից, որպեսզի նա փոխի արտաքին աուդիտն իրականացնող անձին և նշանակի այլ արտաքին աուդիտ իրականացնող անձ:

44.9. Արտաքին աուդիտի եզրակացությունը Կենտրոնական բանկին է ներկայացվում մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

44.10. Եթե Արտաքին աուդիտի կողմից ստուգման արդյունքներով բացահայտված օրենքների, այլ իրավական ակտերի խախտումների վերաբերյալ տեղեկությունները Բանկին (Խորհրդին) չեն ներկայացվել և հետագայում Բանկը այդ խախտումներով պայմանավորված վնասներ է կրել, ապա Արտաքին աուդիտն իրականացնող անձը պարտավոր է հատուցել այդ իրական վնասները:

## **ԲԱԺԻՆ IX. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ**

### **Գլուխ 45. Բանկի վերակազմակերպումը**

45.1. Բանկը կարող է վերակազմակերպվել Բանկի՝ մեկ այլ բանկի հետ միացման և Բանկի վերակազմավորման (կազմակերպական-իրավական ձևի փոփոխության) միջոցով:

45.2. Բանկի միացումը կատարվում է Օրենքով սահմանված կարգով: Բանկի վերակազմավորումը կատարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

45.3. Բանկի վերակազմակերպման ժամանակ Բանկի իրավունքները և պարտավորություններն անցնում են Բանկի իրավահաջորդներին:

45.4. Բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միանալու դեպքում միացող բանկերը կնքում են միացման պայմանագիր, ստանալով Կենտրոնական բանկի նախնական հավանությունը:

45.5. Միացման պայմանագրում սահմանված ժամկետներում միացման մասին որոշում ընդունած բանկերն իրականացնում են միացման պայմանագրով նախատեսված միջոցառումները, հաստատում են փոխանցման ակտը և պահպանվող բանկի կանոնադրության կամ կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ միասին սույն օրենքով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված կարգով ներկայացնում են Կենտրոնական բանկ՝ գրանցման:

### **Գլուխ 46. Բանկի լուծարումը**

46.1. Բանկը լուծարվում է՝

1) լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում.

2) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում.

3) «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում.

4) Ընդհանուր ժողովի որոշմամբ.

5) օրենքներով նախատեսված այլ հիմքերով:

46.2. Բանկի լուծարումը կատարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով, իսկ Կանոնադրության 46.1 կետի 3) ենթակետով սահմանված դեպքերում՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

46.3. Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնել Բանկի լուծարման մասին, եթե Բանկն ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ չունի պարտավորություններ:

46.4. Ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկի լուծարման նպատակով Ընդհանուր ժողովի կողմից լուծարման նախնական համաձայնություն ստանալու համար, Կենտրոնական բանկին դիմելու մասին որոշման հիման վրա, Բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում Բանկի լուծարման նախնական համաձայնություն ստանալու հայտ՝ դրան կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր:

46.5. Կենտրոնական բանկի կողմից Բանկին լուծարման նախնական համաձայնություն տալու դեպքում Բանկը կարող է միջոցներ ձեռնարկել ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ Բանկի պարտավորությունների դադարեցման, ներառյալ՝ այլ անձանց փոխանցման ուղղությամբ:

46.6. Միայն Կանոնադրության 46.3 կետում նշված պարտավորությունները դադարեցնելուց հետո Ընդհանուր ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել: Այդ որոշման ընդունումից հետո Բանկն անմիջապես Կենտրոնական բանկ է ներկայացնում լուծարման թույլտվություն ստանալու հայտ՝ դրան կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր: Փաստաթղթերի ցանկը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

46.7. Բանկի կողմից ներկայացված լուծարման դիմումների մերժման հիմքերի բացակայությունը ստուգելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է իրականացնել ստուգում:

46.8. Բանկի թղթակցային հաշիվների վարման և փակման կարգը, Ընդհանուր ժողովի կողմից լուծարման մասին որոշում ընդունելու դեպքում, սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

46.9. Բանկում լուծարային հանձնաժողովը ստեղծվում է որոշումը կայացնելու պահից՝ առնվազն հնգօրյա ժամկետում՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ Բանկը լուծարելու, նրա գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով: Այն կազմվում է առնվազն 3 (երեք) անդամից: Լուծարային հանձնաժողովը չստեղծվելու դեպքում Բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք: Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է Բանկի Վարչության նախագահը:

46.10. Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում Բանկի կառավարման լիազորությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիփոթեքային պարտատոմս թողարկող է և նրա նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից նշանակվել է հիփոթեքային կառավարիչ: Ապահովված հիփոթեքային պարտատոմսերից բխող պարտավորությունները և դրանց ապահովման միջոց հանդիսացող ակտիվները չեն ընդգրկվում լուծարային կառավարչի կազմած և հաստատված Բանկի լուծարային հաշվեկշռում:

46.11. Լուծարային հանձնաժողովի կողմից Բանկի լուծարմանն ուղղված միջոցառումների ցանկը, իրականացման կարգը և ժամկետները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

46.12. Բանկի կառավարման մարմինները պարտավոր են լուծարային հանձնաժողովը ձևավորելու մասին որոշման կայացումից հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովին հանձնել Բանկի կնիքը, դրոշմակնիքները, փաստաթղթերը, նյութական և այլ արժեքներ:

46.13. Պարտատերերի պահանջների բավարարումը կատարվում է ըստ միջանկյալ լուծարային հաշվեկշռի՝ Օրենքով սահմանված հերթականությամբ:

46.14. Արտոնյալ 1 (մեկ) բաժնետոմսի լուծարային արժեքը հավասար է դրա անվանական արժեքին: Լուծարային արժեքի վճարումն ըստ արտոնյալ բաժնետոմսերի դասերի իրականացվում է հաջորդաբար՝ հետևյալ հերթականությամբ. O, N, M, L, K, J, I, H, G, F, E, D, C, B, A:

46.15. Բանկի լուծարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով լուծարման ընթացում Կենտրոնական բանկը կարող է Բանկում իրականացնել ստուգում:

46.16. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռը, որը Ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը ներկայացնում է Կենտրոնական բանկ:

46.17. Լուծարային հանձնաժողովի անդամներն իրենց գործունեության ընթացքում թույլ տված խախտումների և իրենց գործողություններով պատճառված վնասի համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

46.18. Լուծարային հանձնաժողովի գործողությունները կարող են բողոքարկվել դատարանում՝ Բանկի պարտատերերի, պարտապանների, Կենտրոնական բանկի կողմից:

## **ԲԱԺԻՆ X. ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԴՐՈՒՅՑՆԵՐ**

### **Գլուխ 47. Կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը**

47.1. Ընդհանուր ժողովի կողմից Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները և լրացումները



ենթակա են գրանցման Կենտրոնական բանկում:

47.2. Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկում գրանցվելու պահից:

**Գլուխ 48. Կանոնադրությունը և ՀՀ օրենսդրությունը**

48.1. Կանոնադրության դրույթները չեն կարող հակասել ՀՀ օրենսդրության պահանջներին:

48.2. ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում, մինչև համապատասխան փոփոխությունների կատարումը, Կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով չի հակասում տվյալ պահին գործող ՀՀ օրենսդրությանը: Եթե ՀՀ օրենսդրությամբ չեն սահմանված Կանոնադրությունը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ժամկետները, ապա համապատասխան փոփոխությունները Կանոնադրության մեջ պետք է կատարի հերթական տարեկան Ընդհանուր ժողովը: